ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

<<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 11 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028թթ.



Բովանդակություն

Ներածություն

Դպրոցի առաքելությունը

Դպրոցի համառոտ նկարագիրը

1.Իրավիճակի վերլուծություն,թույլ և ուժեղ կողմեր

2. Նպատակների եվ խնդիրների սահմանում

3.Ուսումնական հաստատության գործունեությունը

4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ ու միջոցառումներ

5.ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուներ

6. Ուսհաստատության զարգացման ծրագրի կատարման արդյուքների գնահատման չափանիշներ

7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը

8.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

9.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Ծրագիրը կազմված է ՀՀԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22 – ի N 35 – Ն հրամանով հաստատված ձևաչափով

Ներածություն

Երկրի զարգացման շարժիչ ուժը երիտասարդ սերունդն է և շատ կարևոր է 21-րդ դարի սովորողի կրթությունն իրականացնելիս ճիշտ ընտրել այն որակները, որոնք մենք կուզենայինք տեսնել մեր շրջանավարտների մոտ, կրթության նպատակը հաջողությամբ իրականացնելու համար: Այսօր անհրաժեշտ է փոխել կրթության զարգացման քաղաքականությունն ամբողջությամբ: Անհրաժեշտ է ավելի հեռու նայել և որոշումների համար հենակետ փնտրել ոչ թե երեկվա և նույնիսկ այսօրվա իրականության, այլ ապագայի հնարավորությունների ու հեռանկարների հասարակության պահանջների մեջ: Սովորողի գիտելիքի անհրաժեշտ ծավալի և տեսակի ընտրության չափանիշը՝ ցուցիչը պետք է այն նպատակային և արդյունավետ կիրառելու հնարավորությունը լինի: Հանրակրթության ոլորտի բարեփոխումները պետության կողմից անհնար կլինի իրականացնել, եթե յուրաքանչյուր դպրոց, ինչպես նաև այդ դպրոցում աշխատող մանկավարժ ևս չգիտակցի իր գործողությունների կարևորությունն այդ գործընթացներում: Ժամանակակից արագ զարգացող ու փոփոխվող աշխարհում անընդհատ նորացվող մրցունակ և որակյալ մասնագիտական գիտելիքները կարող են դառնալ յուրաքանչյուր երկրի կայուն և արդյունավետ զարգացման գրավականը , ինչի հիմքերը դրվում են հենց հանրակրթության ոլորտում: Կայուն զարգացման բոլոր նպատակադրումներում կարևորվում է կրթության դերը: Միաժամանակ կրթության բնագավառում սահմանված է առանձին նպատակ. «Ապահովել ներառական ու արդարացի որակյալ կրթություն և խթանել կրթության հնարավորություններ բոլորի համար ողջ կյանքի ընթացքում, որի երաշխիքը դպրոցական պատշաճ կրթության ապահովումն ու դպրոցում կրթական բարենպաստ միջավայրի առկայությունն է»: Հիմնական խնդիրն այս է՝ ինչպիսի շրջանավարտ պետք է ունենանք, որ ապագայում իրեն չկորցնի, որ միջնակարգ կրթությունից իր ստացած գիտելիքների մեծ մասը ոչ թե դառնա անշարժ ավանդ, այլ երկար ժամանակ և շարունակաբար կիրառելի գործիք, որ նա կարողանա հստակ պլանավորել իր ապագան՝ գնահատելով իր կարողությունները և աշխատաշուկայի առաջարկներն ու

պահանջարկը: Այս պայմաններում անհրաժեշտ է գտնել հանրակրթության արդյունավետության այնպիսի չափանիշներ և ցուցիչներ, որոնց ներդրումը թույլ կտա համակարգի զարգացման շարունակության գործընթացները պահել օրավուր ավելացող, փոփոխվող պահանջների ծիրում: Այսպիսով, հասարակության պահանջներից ելնելով՝ դպրոցը պետք է ապահովի սովորողների անհատական կարողություններին համապատասխան որակյալ կրթություն, որն իր բովանդակությամբ ու ձևերով պետք է համապատասխանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առաջ կանգնած երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացմանը: Գիտելիքների, կարողությունների, արժեքների և վերաբերմունքի ձևավորմամբ դաստիարակել հասարակության ակտիվ և պատասխանատու քաղաքացի՝ ունակ վարելու արդյունավետ կյանք, արագ փոփոխվող աշխարհում ճկուն հարմարվողականություն, դրսևորելու առողջ ապրելակերպ, հարգելու ուրիշների և պաշտպանելու սեփական իրավունքները, արժևորելու սեփական ինքնությունը և առաջնորդվելու հանդուրժողականության սկզբունքով, կայացնելու գիտակցված որոշումներ, նպաստելու խաղաղությանը և պատրաստ լինել ծառայելու ազգային և համամարդկային խնդիրների լուծմանը: Այս հայեցակարգի նպատակը դպրոցի զարգացման ռազմավարական կողմնորոշիչների սահմանումն է, ընդ որում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում այդ կողմնորոշիչների գիտակցմանը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից, ինչպես վարչական աշխատակիցների, մանկավարժների, այնպես էլ սովորողների և նրանց ծնողների:Ապահովելով դպրոցի կրթական ոլորտի կայունությունը՝ այս հայեցակարգը միաժամանակ իրենից ներկայացնում է ճկուն փաստաթուղթ, որը կարող է փոփոխվել ըստ կրթական հաստատության պահանջների և կարիքների:

Տնօրենի պարտականությունները՝

- Պարտադիր կերպով պատասխանատվություն է կրում այն ամենի համար , ինչ տեղի է ունենում դպրոցում և դրանից դուրս;
- Պատասխանատու է աշխատակազմի համար՝ ապահովելով բոլորի ներկայությունը և աշխատանքի հնարավոր բարձր որակը
- Ապահովել չափորոշչային կրթություն՝այսինքն,որ ուսուցիչները սովորեն այն , ինչը պետք է , աշակերտներն էլ , համապատասխանաբար յուրացնեն
- Պատասխանատու է ծնողների առջև , պետք է լսի ծնողներից յուրաքանչյուրի խնդիրը և փորձի դրանց լուծումները տալ
- Պատասխանատու են աշակերտների ֆիզիկական անվտանգությունը ապահովելու համար
- Յուրաքանչյուր դասարանի համար՝ սահմանված նվազագույն գիտելիքները ապահովելու , հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության համար
- Սոցիալական ծառայությունների , սննդի , առողջապահության , տրանսպորտի ապահովման համար

Վերոնշյալի գիտակցմամբ էլ կազմել եմ դպրոցի զարգացման ծրագիրը, որի նպատակադրումները և իրացման գործողությունները պայմանավորված են ցանկությամբ:

Դպրոցի զարգացման ծրագրի մշակման համար կատարված են հետևյալ քայլերը

- Սահմանվել է դպրոցի առաքելությունը
- Վերլուծվել է առկա իրավիճակը , բացահայտվել են եղած հիմնախնդիրները
- Սահմանվել է նպատակները և դրանից բխող խնդիրները
- Սահմանվել է հիմնական գերակայությունները , մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները, ժամանակացույցը և պատասխանատուները:
- Մշակվել է գործողությունների գնահատման չափանիշները ,ռիսկերը
- Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները , նյութատեխնիկական պարագաներ

Դպրոցի առաքելությունը

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Կրթության որակի գերակայությամբ , ազգային լավագույն ավանդույթների , մարդասիրական արժեքների ապահովմամբ , մանկավարժների առաջավոր փորձի զուգակցմամբ, թափանցիկությամբ կրթական գործունեության իրականացում , որի վերջնական նպատակը ՀՀ գիտակից քաղաքացու ձևավորման համապատասխանմիջավայրի ստեղծումն է:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր, առողջ սերունդ՝ քաղաքացիական առողջ հասարակության համար: Դպրոցի առաքելությունը տվյալ տարածաշրջանում մրցունակ կրթական կենտրոն դառնալն է, որը պետք է առաջնահերթ ապահովի աշակերտների անհատական կարողություններին համապատասխան որակյալ կրթություն, որն իր բովանդակությամբ ու ձևերով պետք է համապատասխանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առաջ կանգնած երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացմանը:

Գիտակցված ընտրությունը գործի կեսն է:

Առաքելությունն իրականացվում է կրթության միջոցով՝ ուսուցման և դաստիարակության ոլորտների փոխկապակցվածությամբ: Կրթությունն ուսուցման և դաստիարակության արդյունք է, մարդու կայուն, անդարձելի բնութագիր է՝ որակ, մակարդակ: Հանրակրթության մասին օրենքը սահմանում է.

«Հանրակրթությունն անհատի, հասարակության և պետության շահերից բխող հանրապետության կրթական համակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին, մասնագիտականկողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:

Դպրոցի համառոտ նկարագիրը

Չկա լավ դպրոց , առանց լավ տնօրենի, իսկ այնտեղ, որտեղ կան լավ տնօրեններ , գալիս են մեծ ուսուցիչներ ,որոնք մնում են , քրտնաջան աշխատում և մշտապես աճում ու զարգանում ՝ այդպիսով զարգացնելով այդ դպրոցը։

Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցը Սյունիքի մարզի համայնքային այն բացառիկ դպրոցներից է, որտեղ սովորում են 70 –ից ավելի աշակերտ։ Շենքի հզորությունը՝ 130 աշակերտ ։ Դպրոցի շենքը բաղկացած է մեկ մասնաշենքից, տիպային է, եռահարկ, ունի 1296 քառ/մ մակերես, դրսի տարածքը՝ 2290քառ/մ՝ մրգատու այգի։ Դպրոցը ունի 3 առանձնասենյակ, 4 դասարաններ, 9 առարկայական լսարաններ, նիստերի դահլիճ, մարզադահլիճ, ճաշարան, գրադարան, հանդերձարան, սանհանգույցներ՝ բավարար վիճակում։ Ունի 11 համակարգիչ և լաբորատորիա։ Վերջին տարիների մարտահրավերներին ընդառաջ դպրոցը և համայնքը կարևորում են գիտելիքը, արժևորում որակը, զարգացած, ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորումը։

ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կապանի տարածքային բաժնի կողմից: Դպրոցը համայնքային ենթակայության գործող պետական հանրակրթական միջնակարգ դպրոց է (1-12 դասարաններ), որն իրականացնում է հանրակրթական հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրեր՝

Տարրական	• ընդհանուր 35 սահմանային տեղով
Հիմնական	• ընդհանուր60 սահմանային տեղով
Միջնակարգ	• ընդհանուր 35 սահմանային տեղով

Դպրոցն ուսումնական պարապմունքները իրականացնում է միահերթ հաճախելիությամբ, 5-օրյա աշխատանքային ռեժիմով:

ԴՋԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ , ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ , ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կրթական նոր մեթոդների ներդրմամբ, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ իմացությունների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայր:

ՏՀՏ -ների ներդրմամբ ուսումնական գործընթացի , Օտար լեզուների և բնագիտական առարկաների որակյալ ուսուցում:

Յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ ,հնարավորություններին համապատասխան կրթության ապահովում

Զարգացնել ուսուցման որակը ուսուցման համագործակցային մեթոդների ներդրման , կիրառման միջոցով

Ծնողական խորհուրդների գործունեության արդյունավետության զարգացում:

Դպրոցի բոլոր սովորողների մտավոր և ստեղծագործական ունակությունների լիարժեք զարգացման համար առկա պայմանների բարելավում

ԿԱՊԿՈՒ և ներառման կարիք ունեցող աշակերտի համար իր զարգացման առանձնահատկություններին համարժեք կրթությաւն ապահովում, համապատասխան միջավայրի ձևավորում:

ՈՒսումնական գործունեության նկատմամբ կայուն հետաքրքրության ձևավորում,առաջնապահության հիմքի վրա հետազոտական և նախագծային գործունեության զարգացում

կրթության որակի գնահատման համակարգի արդյունավետ կիրառում՝ գնահատման ժամանակակից մեթոդների և գործիքների միջոցով:

Մանկավարժական կադրերի մասնագիտական աճի ,կարողությունների ,ինքնակրթվելու , ինքնատիրապետելու հմտությունների ձևավորում

Պետական հասարակական կառավարման ձևերի ընդլայնում սովորողների ընտանիքների և համայնքի հետ սերտ համագործակցելու միջոցով

Ձևավորել ինքնուրույնություն, մեդիագրագետ , համարձակ երազող , սեփական տեսակետը բարձրաձայնող , քննարկելու , խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ:

կրթական միջավայրի հարմարվածության բարձր մակարդակի զգզցողության, կրթական գործընթացի բոլոր մասնակիցների մոտ պետական- հասարակական կառավարման մակարդակ

ժամանակի մարտահրավերներին պատրաստ , համագործակցող , հաղորդակցվող , հայրենասեր , մարդասեր կոլեկտիվ

Իրավիճակի վերլուծություն

ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հ/Հ	Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ	Հաստիքների ընդհանուր քանակ	Հաստիքը զբաղեցնող աշխատակիցների քանակ	Հաստիքը զբաղեցնող աշխատակիցների ընդհանուր դրույք
Վարչական միավորներ, այդ թվում				
1	Տնօրեն	1	1	1
2	Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	0.5	1	0.5
Մանկավարժական աշխատողներ				
3	Ձինղեկ	1	1	1
4	Գրադարանավար 1	0.5	1	0.5
5	Լաբորանտ	0.5	1	0.5
6	Հատուկ մանկավարժ 1	0.5	0	0
7	Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	0.5	1	0.5
8	Ուսուցչի օգնական 1	1	1	0.5
Ուսումնաօժանդակ անձնակազմ, այդ թվում				
9	Հավաքարար 1	1	1	1
10	Տնտեսվար	0.5	0	0
11	Հնոցապան 1	1	0	0
12	Խոհարար	0.5	1	0.5
13	Քաղպաշտպանության շտաբի պետ	0.5	1	0.5
14	Օպերատոր 1	1	1	1
15	Հավաքարար 2	1	1	1
16	Պահակ 1	1	1	1
17	Պահակ 2	1	1	1
18	Պահակ 3	1	1	1
19	Կաթսայատան օպերատոր 1	1	0	0
Հաշվապահներ				
20	Հաշվապահ	0.5	1	0.5

Զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները: Վերլուծությունն համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

1.1 Շենքային պայմանների վերլուծություն

Դպրոցի սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը	
Դպրոցը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը	
1.Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:	այո
2.Դպրոցն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց,աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:	այո
3.Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենքին:	այո
4.Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում դպրոցի տարածքից:	այո
5.Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների,կատուների և այլ կենդանիների դեմ:	այո
Դպրոցում պահպանված են բոլոր սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայությունները	
1.Դպրոցի շենքը վերանորոգված է:	մասնակի
2. Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:	ոչ
3. Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:	այո
4. Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:	այո
5. Դպրոցի շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /այսուհետև ԿԱՊԿՈՒ/ սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին՝ /թեքահարթակներ, լայն դռներ և այլն/:	<u>ոչ</u>
6. Դպրոցն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, դպրոցի տանիքը պատված է հրակայուն նյութերով:	այո
7.Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:	այո

8. Դպրոցի համակարգչային սարքավորումները,հեռուստացույցները ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին:	այո
9. Դպրոցի անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին:	ոչ
10. Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը:	այո
11. Դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա վերջիններս ամրացված են հատակին:	այո
12. Դպրոցի ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր:	ոչ
13.Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին,ամուր և բարվոք վիճակում է:	այո
14. Դպրոցում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները:	այո
15. Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:	այո
16. Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:	այո
Դպրոցի նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ	
1. Դպրոցը պահպանում է իր նախագծային հզորությունը:	այո
2. Դպրոցի սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և դպրոցի լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:	այո
3. Դպրոցի դասասենյակներում նստարաններիթիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:	այո
4. Դպրոցի սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անց են կացնում հարմարեցված մարզադահլիճում:	այո

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համարը	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը	Ծավալը	Այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6
1	Շենք / եր /	1	1296	3600	
2	Առանձնասենյակներ	3	84	252	
3	Դասարաններ	4	84	252	
4	Առարկայական լսարաններ	9	221	663	
5	Լաբորատորիաներ	1	19	57	
6	Արհեստանոցներ				
7	Մարզադահլիճներ	1	82	246	
8	Գրադարան /ներ/	1	18	54	
9	Բուժկետ				
10	Ճաշարան	1	12	36	
11	Հանդերձարան /ներ/	2	12	36	
12	Զուգարան /ներ/	3	24	72	
13	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ	1	34	102	
14	Մարզահրապարակ /ներ/				
15	Հանրակացարաններ				
16	Ննջասենյակներ				
17	Համակարգիչներ	11			
18	Համակարգչային այլ տեխնիկա				
19	Հեռախոսներ	1	0285-2-46-37		
20	Ջեռուցվող տարածքներ	1			
21	Ջեռուցման տեսակը		գազ		
22	Ջեռուցման օրերը	93			
23	Տրանսպորտային միջոցներ				
24	Լոգապատ սովորողներ				

25	Երթևեկ սովորողներ	36			
26	Գիշերող սովորողներ				
27	Մրգատու այգիներ		1664		
28	Դեկորատիվ,բուսական այգիներ				
29	Շենքերի ներսի մաքրվող մակերեսներ		1296		
30	Շենքերի դրսի մաքրվող մակերեսներ		2290		
31	Սան. Հանգույցների մաքրվող մակերեսներ	3	24	72	
32	Նիստերի դահլիճ	1	85	255	

ՆՊԱՏԱԿ Շենքային պայմանների բարելավում	ԽՆԴԻՐ միջանցքի , մարզադահլիճի, հանդիսությունների դահլիճի վերանորոգում:Հրաձգար և արհեստանոց չկա
ՌԻՍԿԵՐ սահմանափակ բյուջե արտաբյուջեի բացակայություն, թույլ համագործակցություն	ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Դրամաշնորհային ծրագիրի , բարերարների , ԿԽ ,լիազոր մարմնիաջակցություն

1.2 Նյութատեխնիկական բազայի վերլուծություն

ՈՒսումնական հաստատության ուսումնանյութական բազան նյութական և տեխնիկական միջոցների համալիրն է , որը նախատեսված է պետական, կրթական չափորոշիչների , ուսումնական ծրագրերի և պլանավորումների համապատասխան սովորողների պատրաստման ապահովման,ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների կատարման համար: Դպրոցում առկա է տեղեկատվական ապահովման միջոցներ՝ դասագրքեր , ուսումնական ձեռնարկներ , գիտական և տեղեկատվական գրականություն , , կանոնադրություն , տնօրենի հրամաններ , մանկխորհրդի և աշխատակազմի խորհրդակցությունների որոշումները , նորմատիվ փաստաթղթեր , համակարգչային ծրագրեր , համացանց , էլ. փոստ , դիդակտիկ նյութեր , որոնք ժամանակի պահանջի հետ կնորացվեն :

Նախնական զինվորական պատրաստտականության բազան ոչ արդյունավետ է , դպրոցը ունի հին 2 օդամղիչ հրացան , պաստառներ , տեսական անհրաժեշտ նյութեր , սովորողները մասնակցում են դաշտային պարապմունքների Շատ ցանկալի է ունենալ ինտերակտիվ լազերային հրաձգարան `1000000դ արժողությամբ:

Մարզական բազան համալրված է թենիսի դաշտով շվեդական պատով, որը քիչ է սովորողների թվի համեմատ , վոլեյբոլի և բասկետբոլի գնդակներով , ունի մագլցելու պարան , ներքնակներ , սակայն անհրաժեշտության դեպքում բարերարների և համագործակցող կազմակերպությունների միջոցով ձեռք կբերվի նոր ,ժամանակակից ստանդարտներին համապատասխան գույք: Դպրոցը ունի բաց մարզահրապարակ , որը նույնպես սարքավորումների համալրման կարիք ունի:

Դասարանները համալրված են նոր սեղան- աթոռներով , պահարաններով , գրատախտակներով , անհրաժեշտ դիդակտիկ նյութերով: Անհրաժեշտություն եմ համարում նաև մագնիսական գրատախտակների ձեռքբերումը;

Գրադարանը համալրված է դասագրքերով ,մեթոդական գրքերով , ծրագրային գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականությամբ , սակայն բացակայում են աշակերտների ակտիվ մասնակցությունը ընթերցանությանը:Անհրաժեշտ է սովորողների հետ տարրական դպրոցում նախաձեռնել ընթերցանության տեխնիկայի զարգացման ամենամսյա ստուգում՝ ըստ ԿԶՆԱԿ –ի կողմից հրապարակված չափորոշչի:

Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ ։

ՈՒսումնալաբորատոր բազան համալրված է ներքոնշյալ գույքով

Լաբորատորիաներ կաբինետներ և դահլիճներ	Տարածքը (քմ)	Վերանորոման կարիքը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները (թվարկել հիմնականը և նշել քանակները)	Ուսումնանյութական, ուսումնադիդակտիկ նյութեր	Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը
Ֆիզիկայի լաբորատորիա, Կաբինետ	Լաբ.16, Կաբ.32	չկա, չկա	1.Ներքին այրման շարժիչի մոդել 1 2.Շոգետուրբին 1 3.Տրիբոնոմետր 1 4.Էլեկտրացուցիչ 1	Պաստառներ, Սրվակներ, Կոլբաներ	1.Լարումն իջեցնող ուղղիչներ 2.Էլեկտրոնային վայրկյանաչափ
Քիմիայի լաբորատորիա, Կաբինետ ՈՒսումնալաբորա-տոր բազան համալրված է ներքոնշյալ գույքով,սակայն այն պետք է համալրել նոր և պիտանի միջոցներով և նյութերով: Դասի արդյունավե-տությունը բարձրացնելու նպատակով			1.Նյութերի մոդելներ	պաստառներ, սրվակներ, կոլբաներ, ապակյա ձողեր	1.ինդիկատորներ, կախիչներ,կշեռք, քիմիական նյութեր, տաքացուցիչներ
Կենսաբանության լաբորատորիա, Կաբինետ			1.Մանրադիտակ 2. սիրտ, ուղեղ, թոքերի մոդելներ	Պաստառներ, հերբարիումներ, մանրապատրաս-տուկներ	1.Ձերմաչափ, պետրիի թասեր, ֆիլտրի թուղթ,
Աշխարհագրությունյան լաբորատորիա Կաբինետ Պատմության	33.1	չկա	1.Գլոբուս 3, քարտեզներ	Պաստառներ, ատլաս Հայաստանի պաստառներ, քարտեզներ,	1.Տեղագրական քարտեզներ, կողմնացույց

կաբինետ				գլոբուս	
Համակարգչային լաբորատորիա, Կաբինետ	33.1		Համագարգիչներ-11, տպիչ-4, տեսացրիչ	սկավառակներ	Տպիչ, պաստառներ
Օտար լեզուների լինգաֆոնային Կաբինետ	-	-	-	-	-
Արհեստանոց (նշել ինչպիսի)	-	-	-	-	-
Միջոցառումների դահլիճ /հարմարեցված/	84	չկա	Դաշնամուր-2 ամբիոն, նստարաններ	-	-
Մարզադահլիճ /հարմարեցված/	84	չկա	Սեղանի թենիս-2, շվեդական պատ, նստարան,		Այծիկ, կամրջակ, ներքնակներ, մարմնամարզա-կան պարան,
Այլ					

Լաբորատորիաներում առկա գույքը հին է և ոչ պիտանի , այն պետք է համալրել նոր և պիտանի միջոցներով և նյութերով `դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Կենսաբանության լաբորատոր անհրաժեշտ գույք

h/h	Գույքի անվանում	քանակ	Արժեք/դր. /
1	Պարավյա / զամետոֆին /	1	40000
2	Վիրուս – մոդել	1	18000
3	ԴՆԱ մոդել	1	20500
4	Մոլեկուլյար մոդելի կոմպլեկտ	1	10000
5	Մետաղների նմուշ կոմպլեկտ	1	1200
6	Ձեռնաթաթի կմախքի մուլյաժ	1	8700
7	Մարմնամասի մուլյաժ /սրտի կառուցվածք /	1	8000
9	Կոկորդի մուլյաժ	1	6900
10	Կրծոսկոր	1	3800
11	Ուղեղի մոլյաժ	1	5900
12	Գանգոսկրի կմաղք և ծնոտ	1	10800
13	Գլխի կմաղք	1	16000
14	Նախակենդանու գլխի կմախք	1	16300
15	Կապիկի գլխի կմախք	1	16500
16	Ոտնաթաթի կառուցվածքի մուլյաժ	1	12900

17	Ատոմների մոդել	1	19500
18	Աչքի մոդել	1	12160
19	Երիկամի մուլյաժ	1	18000
20	Ականջի կառուցվածք	1	14600
21	Մաշկի կառուցվածք	1	16000
22	Մարդու կմախք	1	20000
23	Մարդու կմախք ընդհանուր	1	58000
24	Կոնքի մոլյաժ	1	26000
25	Մաշկի կառուցվածք		
26	Կրծքավանդակի կառուցվածք		10000
27	Ներքին օրգաններ		21000
28	Պաստառ կենսաբանության 2,3,4 8,9 / 15 . 8 ,3 /	26	
	Ընդամենը		377360

Քիմիայի լաբորատոր սարքավորումներ և նյութեր

Սպիրտայրոց	Ապակե և հախճապակե ամանեղեն
Մետաղյա կալան	Փորձանոթներ
Փորձանոթների կանգնակ	Սառնարաններ
Լաբորատոր կշեռք	Չափի գլան
Փորձանոթների բռնիչներ	Չափակոլբ
Թորման սարք	Կաթոցիկներ
Ջրի էլեկտրոլիզի սարք	Բաժանիչ ձագար
Գազատար խողովակներ	Ձագար
	Լվացող շշեր
	Պիպետներ
Նյութեր- հայտանյութեր	
• Ֆենոլֆտալեին	
• Լակուս	
• մեթիլ նարնջագույն	
• ինդիկատորներ	
Թթուներ	Հիդրոքսիդներ
HCO , HNO3, H2 SO4 . CH 3 COOH ,H 2 SIO 3	NaOH, KOH, Ba/OH/2 , AL / OH /3 , Mg / OH/ 2, Zn /OH/2 Ca/OH/ 2

H2 CO3	
Աղեր	Օքսիդներ
RMnO4 , KCLO 3 , KNO3 , NaCL , KCL , CaCO3 ,ZnCL3	CuO ,ZnO , AL2O3 Cn2O3 , Fe 2O3 , PbO2 , MnO2 , SiO2
Մետաղներ	Ոչ մետաղներ
Fe Cu , AL , Zn ,Na , K , Mg , Pb	CL2 , BrJ 2 , S
Այլ նյութեր՝ ջրածնի պերօքսիդ , գլիցերին , էթիլ , տեխնիկական սպիրտ , սպիրտ	

Ֆիզիկայի լաբորատոր անհրաժեշտ սարքավորումներ

h/h	Գույքի անվանում	Արժեք/ դրամ/
1	Էլեկտրական և էլեկտրոնիկ թեստի սարքավորումներ/կոմպլեկտ ճամպրուկով /	20000
2	Թվային մուլտիմետր փոքր	10000
3	Ստրոբոսկոպ- մեխանիկական ալիքների միացման ժողովածու/կոմպլեկտ/	35000
4	Թեսլամետր փոքր	5000
5	Ազատ անկման ապարատ	34000
6	Թվային մուլտիմետր մեծ , այդ թվում՝	2 / 80000
	Էլ շարժիչ 2	
	Հոսանքի կոճ 1	
	Փաթույթ 2	
	Երկաթե կենտրոնական փաթույթ 1	
	Մալուխ 4	
7	Ալիքների ցուցադրման սարք 1 կոմպլեկտ ճամպրուկով՝օպտիկա	50000
8	Անկյունաչափ – կողմնացույց 1	2000
9	Գոգավոր և ուռուցիկ հայելիների կոմպլեկտ 1	20000
10	Հոսանքի էլ. շղթա 1	35000
11	Բալիստիկ շարժում՝ ճոճանակ 1	25000

12	Փորձանոթ կոմպլեկտ 1	5000
13	Մեծ կշեռք 1	10000
14	Էլեկտրաստատիկ դաշտ 1/ ճամպրուկով/	25000
15	Կիզակետային հեռավորության որոշման սարք 1	10000
16	Փոփոխական հոսանքի կարգավորիչ	10000
17	Մագնիսական 1 / ճամպրուկով/	40000
18	Արքիմեդի դուրս հրող ուժի փորձի ցուցադրման սարքավորում 1	15000
19	Տեսլամետր մեծ / կոմպլեկտ /	35000
20	Օպտիկական սարքավորում 1	8000
21	Պրիոբրազովատել 1	6000
22	Օսցիլոգրաֆ 1	18000
23	Ուժային սեղանիկ 1	12000
	Ընդամենը	430000

Դպրոցում գործում է 1 լաբորատորիա՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, վերանորոգված է: Լաբորատոր սարքավորումները հին են, նյութերը քիչ: Սակայն հնարավորինս կփորձենք համադրել տեսական և գործնական գիտելիքները դասապրոցեսում, մինչև նոր գույքով համալրումը: Դպրոցը չունի արհեստանոց և համապատասխան գույք, ինչի պատճառով տեխնոլոգիայի դասաժամերը պարապվում են միայն տեսականորեն: Դպրոցում առկա է համակարգչային կաբինետ, որտեղ կան 5 համակարգիչ: Ուսուցչանոցում, կաբինետներում ևս կա 6 համակարգիչ: Այս ամենը հնարավորություն է տալիս ինֆորմատիկայի և մյուս դասաժամերը լիարժեք պարապելու:Մարզադահլիճը և միջոցառումների դահլիճը հարմարեցված են: Ֆիզկուլտուրայի ժամերին, հատկապես ձմռան ամիսներին ունենում են որոշակի դժվարություններ:Դպրոցից ոչ հեռու գտնվում են կիսաքանդ շինություններ ,/ ծրագրի առաջնամասում տեղադրված նկարում երևում է/ որը պետության աջակցության դեպքում կարող է կառուցվել և շահագործվել որպես արհեստանոց կամ հրաձգարան: Այս խնդրի լուծումը համագործակցության մեծ շրջանակներ է պահանջում համայնքի , ծնողների , սովորողների , և մանկավարժների շրջանում :Շատ կարևոր է համայնքի ղեկավարի , ԿԽ-ի և լիազոր մարմնի աջակցությունը:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման ծրագիր

Դպրոցն ունի անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ: Ուսումնական միջավայրի բարելավման ուղղությամբ տարված է մեծ աշխատանք, համալրված է նոր գույքով, նախատեսում եմ ուսումնական նպատակով լաբարատոր գույքի հետ նյութատեխնիկական բազան համալրել հետևյալ միջոցներով:

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028
1.	Սմարթ գրատախտակ						v
2.	Գունավոր պրինտ			v			
3.	Շարժական գրատախտակ	v					
4.	Տեսացրիչ սարքեր		v	v			
5.	Լաբորատոր սարքավորումներ					v	
6.	Սպորտային գույք				v		
7.	Կարի մեքենա		v				

Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքներում հնարավոր են ֆորսմաժորային իրավիճակներ, և կարող է կատարվել գնումներ, որոնք ամրագրված չեն նյութատեխնիկական բազայի բարելավման ծրագրում / աշակերտական սեղան-աթոռ, գրատախտակ, ուսումնական պաստառներ, քարտեզներ, ուսումնաօժանդակ գրքեր, ձեռնարկներ/ըստ անհրաժեշտության:



1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն

Դպրոցում կատարվող աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև ուսումնական միջավայրը կարգավորելու և բարելավելու նպատակով արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում է համագործակցությունը խորհրդակցական մարմինների հետ: Տնօրենը միայնակ ոչինչ անել չի կարող, նրան անհրաժեշտ են օժանդակողներ: Ղեկավարը, որը միայնակ է որոշում, թե ինչպիսի փոփոխություններ և ինչպես է իրականացնելու, դատապարտված է անհաջողության: Այս առումով առանցքային է կրթության գործընթացի՝ սովորողի, սովորողի ծնողի, մանկավարժական աշխատողի, վարչական աշխատողների և կոլեգալ կառավարման խորհրդի դերը:

Փոփոխությունների իրականացման հաջողությունները կառավարման խորհրդի հետ համագործակցությունն է: Այսօր՝ մարտահրավերների այս շրջանում, ԿԽ-ը գիտակցում է և պատրաստակամ է օգնելու տնօրենին՝ իր լիազորությունների սահմանում ունենալ ավելի լավ, առաջատար, որակյալ դպրոց: Խորհրդի նիստերը կհրավիրվեն 3 ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ հանդիպումներ կկազմակերպվեն: Կառավարման խորհուրդը հսկողություն է սահմանում զարգացման ծրագրի ամենամյա կատարողականի, հաշվետվությունների և քննարկումների ուղղությամբ: Հավանության է արժանացնում հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները, նախահաշիվը, հաջորդ

բյուջետային տարվա ֆինանսավորման նախնական հայտը: Լսում է հաշվետվություններ՝ ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասին:

2022թ. փետրվարի 9-ի «Հանրակրթության մասին» ՀՀ նոր փոփոխված օրենքի համաձայն խորհուրդը կաջակցի ու կտա եզրակացություն, կվերահսկի ժամանակացույցը, տարեկան նշված գործողությունների իրականացման ընթացքը, որը ըստ տարիների կերևա ուսումնադաստիարակչական տարեկան աշխատանքային պլանում:

Դպրոցի կոլեգալ կառավարման մարմինը՝դպրոցի խորհուրդը, բաղկացած է 9 անդամից, որոնցից 2-ը դպրոցի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ են, 2-ը ընտրվել են ծնողական խորհրդի կողմից, 3-ը Սյունիքի մարզպետի ներկայացուցիչն են և 1-ը ՀՀ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչն է: Դպրոցի խորհրդի լիազորությունները պետք է ծավալվի հետևյալ ուղղություններով՝

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղություն:
- Դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Կրթության կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկություններ ներկայացնելը:

ԿԽ-ը հաստատում է

- Ներքին կարգապահական կանոնները
- Աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները
- Իր գործունեության աշխատակարգը
- Նիստերի օրակարգը, ժամանակացույցը

Խորհուրդները ունեն ինքնավարություն, ազատ են իրենց գործողություններում:

1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցական համայնքը պետք է անտարբեր չլինի դպրոցի և կրթության նկատմամբ: Այն պետք է դառնա ժողովրդական քաղաքացիական հասարակության համար կարևոր բարոյական արժեքներ սերմանող օղակ:

Կրթության գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով դպրոցում գործում են խորհրդակցական մարմիններ: Բոլոր ժողովրդավար ղեկավարները գլխավոր խնդիր պետք է համարեն կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ջանքերի համատեղումը:Առաջին պլան մղելով մտահոգությունը ընդհանուր բարօրության համար տանում է դեպի որոշումների ընդունման կոլեգիալ համակարգ: Դպրոցում հրավիրվում է ինչպես դասրանական ծնողական, այնպես էլ համադպրոցական ժողովներ, որտեղ քննարկվում են ուսումնադաստիարակչական հարցեր: ԾԽ-ն մասնակցել է տնօրենի հավակնորդի հետ հանդիպմանը, ներկայացրել առաջարկություններ, որոնք ընդգրկվել են զարգացման ծրագրում: Սովորողների կրթության գործում ամենամեծ ներդրումը պատկանում է ծնողին: Նրանք լսում են դպրոցի տնօրենի հաղորդումը դպրոցի ներքին գնահատման մասին, մասնակցում գնահատմանը: Ծնողները առաջին շահագրգիռ կողմն են ուսման որակի, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների բարձր մակարդակով կազմակերպելու և հաջողություններ գրանցելու պայմանների ստեղծմանը: Նրանց համագործակցությունից է կախված դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը, ինչպես նաև վստահությունը տնօրենի հանդեպ: Ծնողները մասնակցում են նաև ԱՌՊ-ի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացին: Ծնողները երբեմն կարող են ԾԽ նիստերին հանդես գալ զեկույցներով, որոնք ամրագրվում են տարեսկզբին հաստատված աշխատանքային պլանում: Անհրաժեշտ է, որքան հնարավոր է խորացնել ծնող և դպրոց հարաբերությունը: Իսկ այդ հարաբերության ամրությունը կառաջացնի փոխադարձ հարգանք և վստահություն:Պետք է ապահովել

քննարկումներին ծնողների ,հանրության ներկայացուցիչների ակտիվ սովորողների /ԱԽ ներկայացուցիչներ/ մասնակցությունը: Որոշումների կատարման պատասխանատվությունը պետք է բաշխել բոլոր մասնակիցների միջև , քանի որ որոշումները և գործողությունների պլանը ձևակերպվում են համատեղ Դպրոցի խորհրդակցական մարմինների հետ ամուր կապը ծնողների համար ապահովում է տեղեկատվության կազմակերպումը և տարածումը: Սովորողների խնդիրները երբեմն կարող են տեսանելի չլինել ծնողներին, նրանք կարող են չտիրապետել ճիշտ դաստիարակելու կանոններին, որի պատճառով սովորողը կարող է թերանալ, բացակայել դասերից, ենթարկվել վատ շրջապատի ազդեցությանը: Նման դեպքերը կանխելու նպատակով նրանց պետք է իրազեկել խնդրի մասին և միասին գտնել լուծումներ:

Ծխ-ն ունի նիստերի արձանագրության մատյան:



Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- Կազմակերպել արդյունավետ հանդիպումներ օրակարգային հարցերով
- Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում
- Շարունակել համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ , ապահովել նրանց փոխհամագործակցությունը:

Պետք չէ մոռանալ,որ երեխան դաստիարակվում է մանկուց ընտանիքում,և դպրոցը միայն կարող է իր միջամտությամբ օժանդակել,ընտրել դաստիարակության ճիշտ ուղին՝ կազմակերպելով բազմաթիվ և տարաբնույթ միջոցառումներ:Դպրոցը պետք է քայլեր ձեռնարկի սովորողների դաստիարակության համակարգի կատարելագործման ուղղությամբ՝

- ծնողների ուսուցում կազմակերպելով,
- առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը
- արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ողղվածություն տալով
- ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,
- ծնող-դպրոց կապը հզորացնելով

Վերոբերյալի հիմամբ ՝նպատակ ունեմ բարելավելու դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքները՝մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմներ: Դպրոցը պետք է կարողանա բացահայտել աշակերտների բազմակողմանի կարողությունները ,խրախուսել օժտված աշակերտներին:

Աշակերտական խորհուրդը դպրոցում քաղաքացիական կրթության կարևորագույն տարրն է: Այն ակտիվորեն մասնակացում է դպրոցի ժողովրդական կառավարմանը, համայնքի աշխույժ կյանքին: Աշակերտական խորհուրդը խորհրդակացական ձայնի իրավունքով մասնակցում է ԴԽ-ի և ՄԽ-ի նիստերին՝ աշակերտներին վերաբերող ուսումնական հարցերի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպմանը, աշակերտների կարգապահական հարցերի քննարկումներին, մասնակցում է համայնքային ծրագրերի իրականացմանը և առաջարկություններ ներկայացնում տնօրենությանը ներքին կարգապահության, հանգստի և ժամանցի կազմակերպման, դպրոց-ընտանիք կապի ամրապնդման և այլ հարցերի շուրջ: Ախ-ն ունի արձանագրությունների մատյան, որտեղ

գրանցվում են բոլոր նիստերը՝ 9 նիստ: ԱԽ-ի գործունեությունը պետք է ակտիվացնել: Այն որակյալ կրթության, դասավանդման բովանդակության, գիտելիքի յուրացման որակի, բարձր մակարդակով միջոցառումների կազմակերպման, մրցույթների, մեկը մյուսի նկատմամբ հոգատար վերաբերմունքի պահանջատերն է: ԱԽ-ի ոգևորող միջոցառումներից մեկը աշակերտների ինքնակառավարման օրն է, որը նաև շատ-շատերի համար դառնում է մասնագիտություն ընտրելու կարևոր գործոն: ԱԽ-ն ընտրվում է իր ներկայացրած ծրագրի իրատեսական քայլերի ներկայացմամբ: Դպրոց հաճախում են 71 աշակերտ, որից 36-ը՝ քաղաքից: Աշակերտների տեղափոխումը կազմակերպվում է առանձին ավտոբուսով: Կան սովորողներ, որոնք հաճախում են արտադպրոցական խմբակներ:



Մեթոդական աշխատանքի կենտրոնը մեթոդական միավորումն է :Ներդպրոցական վերահսկողության պլանը կազմելիս հաշվի են առնվում մեթոդական աշխատանքի հետևյալ տարրերը՝

1. Վարչական կազմի և ուսուցիչների որոկավորման բարձրացում
2. Աշխատանք երիտասարդ մասնագետների հետ , աշխատամք սկսնակ/նորեկ/ուսուցիչների հետ
3. Մեթոդմիավորման աշխատանք



Դպրոց- ծնող կապն իրականացվում է հիմնականում ծնողական խորհուրդների գործունեությամբ: Բոլոր էքսկուրսիաները, սոցներդնումները կատարվում են ծնողխորհուրդների միջոցով ու մասնակցությամբ: Կանոնադրական մյուս պահանջների կատարման համար ծնողխորհուրդները նախաձեռնություն չեն ցուցաբերում կամ ցուցաբերում են մասամբ:Երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործում բավարար չէ ծնողների մասնակցությունը: Հոգալով իրենց երեխաների սոցիալական կարիքները՝ մեծ մասը հետևողականորեն չէ նրանց կրթության հարցում, որը դժվարացնում է մանկավարժի աշխատանքը, չեն հասնում ակնկալվող արդյունքի: Թույլ են ծնողների շրջանում տարվող մանկավարժական քարոզչությունը, ընտանիքի կողմից երեխայի նկատմամբ միասնական մեթոդամանկավարժական մոտեցումներն ու պահանջները: Փաստ է, որ ծնողներն հետևողական են իրենց երեխաների պաշտպանության հարցում ու ոչ հետևողական պարտականությունների կատարման մեջ:

Ծնողական խորհուրդը գործում է ըստ կանոնադրության, նախաձեռնում որոշ միջոցառումներ, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով չի կարողանում կազմակերպել հայրենաճանաչողական շրջագայություններ :



1. 5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակներ

Ուսուցիչը մի հրաշագործ է, որ ընդունակ է երեխաներին տեղափոխել մի դարաշրջանից մյուսը:

Դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկված են 20 ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ,մանկավարժական խորհրդի անդամներ են նաև ԾԽ և ԱԽ նախագահները: Ուսումնական տարվա ընթացքում խորհուրդը սահմանված կարգով անց է կացնում 8- 10 նիստ,անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ , որտեղ լսվում են խորհրդի կանոնադրությամբ նախատեսված հարցեր, կայացնում որոշումներ: Մանկավարժական խորհրդի առաջին նիստում հաստատվում է խորհրդի նիստերի

օրակարգը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դպրոցական բաղադրիչի ժամերի բաշխումը: Այսօրվա մարտահրավերներին ընդառաջ՝ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հասարակության կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակի բարելավումը ենթադրում է կրթական մակարդակի բարձրացում, դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում:

Անհրաժեշտ է՝

- մշակել ղեկավարման և կազմակերպման մեխանիզմ , որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակառման մակարդակի հետագա բարձրացմանը
- ստեղծել նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի մոդելներ , որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը
- աջակցել մանկավարժներին մշակելու , տպագրելու իրենց ուսումնամեթոդական աշխատանքները
- մոտիվացնել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ , ստեղծել պայմաններ փորձարարական աշխատանքների համար 1. աջակցել և ուղղորդել ուսուցիչներին նախապատրաստվելու և մասնակցելու ուսուցիչների կամավոր ատեստավորմանը:



- Բոլոր առարկաները դասավանդվում են մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների կողմից: Դպրոցի գրեթե բոլոր մանկավարժները մասնակցել են պարտադիր ատեստավորման վերապատրաստման դասընթացներին և շարունակում են մասնակցել ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացվող վերապատրաստումներին՝ առկա և առցանց ձևաչափով: Ուսումնասիրում են նոր չափորոշչի պահանջները վերապատրաստումների միջոցով:

Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը



Վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը



Որպես ուսուցիչ վերապատրաստող /դասախոս/, վերապատրաստված, վերապատրաստման դասընթացներ վարող 1 ուսուցիչ ունի դպրոցը: Ուսուցիչների միջին տարիքը 46 է: Ուսումնական գործընթացում ՏՀՏ , այդ թվում՝ ինտերնետ կարողանում են կիրառել բոլոր ուսուցիչները:

Մանկավարժական կազմն ըստ ստաժի





Դրույքների չափ	Ուսուցիչների թվաքանակ
1. 0-1.5	3
0.75-1.0	8
0.5-0.75	4
0.25-0.5	5

Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին/սովորողներին /ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ:Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում:

Դպրոցում առկա են 12 դասարանախմբեր: Ստորև ներկայացվում է աշակերտների կազմը 01.05.2023թ. դրությամբ:Սովորում են 2 ԿԱՊԿՈՒ աշակերտներ:

Դաս. թիվ	1	2	3	4	1-4	5	6	7	8	9	1-9	10	11		12	10-12	Ընդ.
Աշակ. թ	5	5	8	7	25	15	5	4	5	5	34	6	2		4	12	71
ԿԱՊԿՈՒ			1		1	1					1						2

Աշակերտները ոչ միայն մտավոր այլև սոցիալական և հուզական անհատականություններ են և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա :Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները , պետք է հաշվի առնենք կրթության որակն ըստ ուսումնառության արդյունքների

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Մանկավարժական համակազմը երիտասարդ է և շատ արագ է հարմարվում կրթական բարեփոխումներին • Գրեթե բոլորը տիրապետում են ՏՀՏ-ներին • Մշակվելու է փոխադարձ դասալսումների վերլուծությունների կատարման մշակույթ , որի շնորհիվ կգործի սովորելու և սովորեցնելու նպատակ • Յուրաքանչյուրի կատարած աշխատանքը կգնահատվի ըստ արժանվույն , ըստ գնահատման աղյուսակի:	• Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքը ավելի ծավալուն ու հետևողական պետք է լինի:

Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների



1. 6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներ և նորարարություններ

Աշակերտների գիտելիքների գնահատման, անհատական առաջադրանքների հանձնարարման և ուսումնական ծրագրերի կազմման ընթացքում պետք է լայնորեն օգտագործեն ժամանակակից տեխնոլոգիաներ: Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների,ուսուցման նոր ձևերի մշակումը: Դպրոցը պետք է ապահովված լինի այն բոլոր տեխնիկական միջոցներով, որոնք անհրաժեշտ են 21–րդ դարի քաղաքացիների ձևավորման համար: Ուսուցիչները պետք է ամեն անգամ նորովի կարողանան դասապրոցեսին կիրառել նոր տեխնոլոգիաները: Դպրոցում առկա է ինտերնետ կապ, որը մանկավարժներին, աշակերտներին, վարչական աշխատողներին հնարավորություն է տալիս դասի ընթացքում և դասից դուրս՝ տանը, պատրաստել քարտեր, ռուբրիկներ, հանել դասին առնչվող լրացուցիչ նյութեր, կազմել ծրագրեր, պլանավորել դասը, կազմակերպել տարբեր առարկաների դասի բովանդակությանն առնչվող մոտիվացնող նյութեր՝ գունավորելու հնարավորությունը թողնելով սովորողների ճաշակին: Վարչական աշխատողները պաշտոնական գրությունները՝ ամբողջ թղթավարությունը, տարիֆիկացիաները, տարեկան պլանները, հաշվետվությունները, տնօրենական գրավորների հաշվետվությունները, գնահատման ձևաչափերը կազմում են համակարգչով՝ նորացված ծրագրերով: Ուսուցիչներից շատերը տիրապետում են նոր գործիքակազմին, դասերի որակը և մեթոդները դարձնում ավելի մոտիվացնող:

Մեդիագրագետ երիտասարդությունը իրավագիտակից հասարակության գրավականն է: Այդ է պատճառը , որ ուսուցիչները պետք է նախագծային աշխատանքներ առաջարկեն սովորողներին,որպեսզի վերիններս մեդիադաշտում ստեղծեն սեփական փոդքասթը և այն ներկայացնեն խրախուսման:Այս դեպքում ուսուցիչը և նախագծի մասնակիցը պատասխանատվություն կվերցնեն <<սեփական մեդիապրոդուկտի>> նկատմամբ:Աշխարհում ամենաուժեղ ռեսուրսը ուշադրությունն է , ևմենք պետք է հետևենք , թե ինչ բովանդակության վրա ենք սպառում այդ ռեսուրսը:ՏՀՏ կիրառումը դյուրացնում է ուսուցչի աշխատանքը: Ուսուցման ընթացքում կիրառում են տարբեր մեթոդներ, որի համար շատ ավելի կարևոր է էլեկտրոնային գրատախտակի

առկայությունը: Կրթական նոր տեխնոլոգիաների կիրառմամբ խթանվում է դասապրոցեսը, դասի որակը, սովորողների առաջադիմությունը:



Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- Հանդիպել համայնքի ղեկավարին , քննարկել ֆինանսի հնարավորությունները
- Օրենքով չարգելվող այլ միջոցների հաշվին
- Ապահովել նոթբուքերով նաև առարկայական դասասենյակները, ՏՀՏ կիրառման միջոցով բարձրացնել դասաժամի օգտագործման նպատակայնությունն ու ուսուցման արդյունավետությունը:
- ՏՀՏ տիրապետման մակարդակը կարևոր է հետագայում ֆորսմաժորային իրավիճակներից խուսափելու և ուսուցման որակը բարելավելու համար:

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի բարելավում

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից

- ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ
- շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների կարողունակություններ և ըստ կրթական աստիճանի ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ
- հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ
- սովորողների գնահատման ձևեր , սանդղակ , հաշվառման կարգ

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Աշխատանքն արդարացված է, եթե կա կրթության որակ: Կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ է վերլուծել

- Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը
- Կրթական գործընթացի կատարողականությունը
- Կրթական գործընթացի արդյունավետությունը
- Կրթական գործընթացի որակը կրթական տարբեր աստիճաններում
- Դասերի , ուսումնական միջոցառումների որակը

Վերոնշյալ կետերի նկատմամբ կիրականացվի վերահսկողություն, հետևողականություն, կմշակվի գործողությունների պլան՝ առկա սխալները, թերությունները վերացնելու համար: Մասնագետ ուսուցիչների դասաժամերն կօգտագործվեն փորձի փոխանակման, նոր մեթոդների կիրառման, դիդակտիկ պաստառների ցուցադրման, գնահատման տարբեր ձևերի մշակման, դպրոցում առկա բոլոր հնարավորությունների,

նոր և դասի բովանդակությանն համապատասխան մեթոդների կիրառմամբ ։ Յուրաքանչյուր ոստարվա սկզբում ըստ հաստատված ժամանակացույցի ու պլանի կիրականացվեն առարկայի դրվածքի ուսումնասիրություն։

Մերօրյա դպրոցում հանդիպում ենք հետևյալ խնդիրներին `

- ԲՏՃՄ առարկաների մասնագետների պակասը
- 30 կրեդիտ հավաքել չցանկացողներ
- Կամավոր ատեստավորմանը մասնակցել չցանկացողներ
- մանկավարժությամբ զբաղվել չցանկացողներ։

Կարծում եմ՝ այս խնդիրը համակարգային է, և ամենամեծ մոտիվացիան առանց կամավոր ատեստավորման աշխատավաձի բարձրացումն է, որից հետո ատեստավորումը ուսուցիչների ցանկությանը թողնելը։

Սահմանված նպատակին և խնդրին համապատասխան գործողություններ

- Եղած և եկող մասնագետների հետ տանել սովորեցնելու , աշխատանքը սիրելու , ինքնակրթվելու ռազմավարություն,
- Խրախուսել և մոտիվացնել ուսուցիչներին
- Լինել կամեցող ընկեր և խորհրդատու։

Ղեկավարի կարևորագույն որակներից է այնպիսի ընդհանուր նպատակի կամ ապագայի պատկերի ստեղծումը , որը լավատեսական միջավայր և հաջողության հասնելուն վճռականություն կստեղծի կազմակերպության ներսում , կապահովի վստահության մթնոլորտ և արդյունավետ հաղորդակցություն , կխրախուսի ազնվության և արդարամտության դրսևորումը ։Կարևոր որակներ են ախտորոշման , իրավիճակները սթափ գնահատելու և դրանց համապատասխան գործընթացներ և գործողություններ նախաձեռնելու ունակությունները։ Վերահսկողության ձևերը կարող է մշակել դպրոցը ։Վերահսկողութան արդյունավետությունը կախված է մի շարք ընդհանուր պայմաններից ։Որակի վերահսկողության իրականացնողները

առաջին հերթին ուսուցիչներն են , այդ պատճառով այն փաստաթղթերը , որոնցից ուսուցիչները օգտվում են , պետք է նկարագրեն վերահսկողության բոլոր կողմերը։

Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Հիշելով , որ պահանջարկի գնահատումը վերլուծում է աշակերտի առաջադիմության ցանկալի աստիճանի և իրական աստիճանի միջև բացը , աշակերտի ձեռքբերումները պետք է գնահատվեն արդյունքի ցուցանիշների հետ համեմատվելով ։Սա նշանակում է , որ այնպիսի թեստ կամ թեստեր պետք է ընտրել , որ իսկապես համապատասխանում են արդյունքի ցուցանիշներին այնպես , որ թեստից ստացած գնահատականը կարելի լինի համարել աշակերտի ուսման մակարդակի չափման ճիշտ միավոր ՝ ՝կոնկրետ արդյունքի ցուցանիշի համար։Թեստերը պետք է համապատասխանեցնել արդյունքի ցուցանիշների հետ ։Կարող են օգտագործվել գիտելիքների ստուգման այլ ձևեր, սահմանելու , թե աշակերտները որքանով են յուրացրել այն , ինչը պահանջում է արդյունքի ցուցանիշը։

Ըստ նպատակի ՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ , որոնք հաջորդում են մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել.

1. հայտորոշիչ գնահատում

2. ձևավորող գնահատում

3. ամփոփիչ գնահատում

Ձևավորող գնահատումը դասապրոցեսում ուսուցչի ստեղծագործ աշխատանքի արդյունք կարող է լինել։Ամփոփիչ, բնութագրող գնահատման ձևերը մշակում է ԿԳՄՄՆ։ Արդյունքի ցուցանիշը ավելի փոքր բաղադրիչի բաժանելու գործընթացը հիմնականում ձգվում է մեկ տրամաբանական գծով , որի վրա դասավորված են պահանջվող հմտությունները և գիտելիքը։

Սովորողը պետք է ունենա չափորոշչով սահմանված հանրակրթական հիմնական հմտություն, դիրքորոշում, արժեքային համակարգ և կարողունակություններ՝ թվային և

մեդիա ,ժողովրդավարական և քաղաքացիական, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական , մշակութային , մաթեմատիկական և գիտական ,լեզվական գրագիտություն և կարողունակություն , տնտեսական կարողունակություններ , որը ձևավորվում է սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի , սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով, որոնք բխում են հանրակրթության հիմնական նպատակներից

Նպատակ

- Կրթության որակի բարելավում,չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում,աշխատանք օժտված երեխաների հետ:

Խնդիր

- Վերջնարդյունքների գնահատում մնացորդային գիտելիքի ապահովում:Օտար լեզուների և բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման որակի բարելավում

Ռիսկեր

- Սովորողի կողմից որակյալ կրթություն ստանալու ցանկությանբացակայություն: Ֆորս-մաժորային իրավիճակներ:Ծրագրված միջոցառումների հեռավար անցկացման խոչընդոտներ,տեխնիկական միջոցներ,հարթակներից և ռեսուրսներից օգտվելու հմտություններ, ֆինանսական միջոցների պակաս:

ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդնում

Սովորողների մոտիվացիայի ստեղծում

Ուսումնառությունը խթանող,ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ապահովում

1. 8 Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայր

Եթե ուզում ես արագ գնալ, գնա մենակ,

Եթե ուզում ես հեռու գնալ, գնա թիմով...

2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում / ՈՒՀՁ/: Այն տեղեկատվությունը աշակերտներին ներկայացնելու, նրանց սովորածը ստուգելու և դասապրոցեսում ներգրավվելու բազմազան միջոցների ամբողջություն է: Այս մոտեցումն հիմնված է ամբողջ դասարանին, սովորողների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա: ԿԱՊԿ ունեցող յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարության ելակետային դրույթներից մեկն այն է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից:

Կրթության կազմակերպման բազմակողմանիությունն ու մասնակցային արժեքային համակարգի ձևավորումն, կրթության մատչելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Հանրակրթության մասին օրենքով, երեխաների իրավունքներին առնչվող միջազգային կոնվենցիայով և հռչակագրի դրույթով՝ հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի 30. 12. 2022թ. N88 հրամանը.

- Դպրոցում ապահովել ուսուցման և ուսումնական գործընթացի մատչելիությունը, ներառականությունն ու արդյունավետությունը:
- Հետևողականություն ցուցաբերել դպրոցում ուսուցումը համընդհանուր դիզայնի սկզբունքներով կազմակերպելուն:
- Համագործակցային հանդիպումներ կազմակերպել կրթության ոլորտին առնչվող հասարակական կազմակերպությունների հետ:

- Տարածքային աջակցության կենտրոնի հետ մշակել աշխատանքային պլան և ժամանակացույց մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման համար։
- Ապահովել ԿԱՊԿ ունեցող սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների՝ ուսուցման անհատական տեխնիկական միջոցների և գույքի, սարքավորումների, մատչելի ձևաչափով մշակված ուսումնական նյութերի, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցների տրամադրումը։

Դպրոցում սովորում են 2 ԿԱՊԿ ունեցող աշակերտ, որոնցից մեկը ունի մտավոր հետամնացություն, իսկ մյուսը՝ հենաշարժողական խնդիր։ Դեռևս իրագործելի չէ խելամիտ հարմարեցումները, դպրոցը չունի թեքահարթակ և պետքարանից օգտվելը հեշտացնելու անհրաժեշտ հնարավորություն։ Ներառական ուսուցման գործընթացը իրենից ներկայացնում է ճիշտ և միասնական աշխատանք՝ տարբեր կարծիքների վերլուծությամբ։ Կփորձեմ ստեղծել թիմային միջավայր, որպեսզի թիմերը հանդիպեն շաբաթական 1 անգամ, քննարկեն դպրոցում կատարված և կատարվելուն առնչվող հարցեր, կկատարեմ աշխատանքի բաժանում։ Դպրոցը ունի միայն ուսուցչի օգնական, ով պետք է համագործակցի ծնողի, ՏՄԱԿ-ի և դպրոցի ուսուցչական անձնակազմի հետ։ Ցանկացած նորարարություն, եթե այն պետք է փոփոխության հանգեցնի, պահանջում է տարբեր մասնակիցների կարծիքների փոխանակություն։ Որոշումներ կայացնելիս, եթե այդ որոշումը ի նպաստ դպրոցի հաջողությամբ է պսակվում, գործընթացից գոհ են լինում թե՛ ծնողը, թե՛ մանկավարժը և թե՛ ղեկավարությունը։ Անշուշտ առանցքային է ուսուցիչների վերաբերմունքը, ծնողների մոտեցումը, սովորողների կարծիքը։ Մասնակցային արժեքային միջավայրի ցանկացած գործընթացի վերլուծությունը ղեկավարին հնարավորություն է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ առ այն, թե այդ գործընթացում ինչ կարելի է անել, ինչ՝ չի կարելի։ԿԱՊԿ ունեցող սովորողին պետք է տալ հնարավորություն՝ օգտագործելու իր ֆիզիկական, մտավոր, էմոցիոնալ հնարավորությունները, աշխատանքային ողջ կարողությունները շրջապատում որքան հնարավոր է ինքնուրույն հանդես գալու համար։ Թիմը պետք է խորհուրդներով աջակցի ուսուցիչներին, հնարավորինս հարմարեցնել դասարանը՝ ելնելով աշակերտի ֆիզիկական, մտավոր,

սոցիալական և հոգեբանական կարիքներից: Կարևոր է, որ դասարանի ղեկավարը ԿԱՊԿ ունեցող սովորողին ընդգրկի արտադասարանական միջոցառումներին, մի փոքր առաջընթացի դեպքում խրախուսի և ոգևորի: Խրախուսման միջոց կարող է լինել շեշտված ծափահարությունները, փոքրիկ նվերը կամ պատվոգիրը: Եթե առաջընթացը ակնառու է, թիմի կատարած արդյունքը շոշափելի, եթե գնահատման չափանիշով երեխայի մոտ արձանագրվել է փոփոխության դինամիկա, ուրեմն կարելի է խրախուսել նաև ուսուցչին:

Որպես տնօրեն պարտավորվում եմ ապահովել՝

- Ծնողի մասնակցությունը ԱՈՒՊ-ի վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացին:
- Տեղեկություն, աջակցության ծավալ, ժամանակահատված:
- Ուսուցչի օգնականների և մասնակցային թիմի անդամների մասնակցությունը տարբեր դասընթացների և վերապատրաստումների:

Այս առումով կարևորում եմ ուշադրության կառավարումը, որը գործընթաց է դպրոցի ներսում առկա ուժերը հրավիրել դպրոցի բաղկացուցիչ հանդիսացող հիմնական արժեքներին, գաղափարին և նպատակներին:

Նպատակ	• Դպրոցում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կոլեկտիվ մեջ համագործակցելու ցանկություն առաջնի:
Գործողություն	• Նոր գաղափարների լուսաբանում, պաշտպանում, իրականացում: Բոլորին աշխատանքում ներգրավելու հմտություն: • Ներքին կարգուկանոնի վերահսկում: • Թափանցիկ աշխատանք:
Ռիսկեր	• Կարծրատիպ, որ դժվար է աշխատել ԿԱՊԿ ունեցող սովորողի հետ: • Սովորողը չի յուրացնում, հետ է մնում ծրագրից: • Ծնողի անտարբերություն:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

- Միջավայրը հարմարեցնել երեխայի կարիքներին:
- Մշակել կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներ և աստիճանաբար հասնել նպատակների իրագործմանը:
- Ծնողին դարձնել երեխայի կրթական գործընթացի լիարժեք մասնակից և համագործակցությունը թիմի հետ ապահովել:



Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները: • Հաստատությունում ապահովվում է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը և բացառում է սովորողի անձի նկատմամբ ֆիզիկական և (կամ) հոգեբանական բռնությունը: • Քայլեր են ձեռնարկվում սովորողների սոցիալական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, ապահովված է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու իրավունքը: • Ուսուցչամանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիքարժեք ներառումը: • Առկա է սովորողների ինքնաարտահայտման և ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները:	• Սովորողների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ: • Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ցածր մասնակցություն: • Կարծրատիպ, որ դժվար է աշխատել ԿԱՍՊԿ ունեցող սովորողի հետ: • Միջավայրային հարմարեցումներ:

Ժողովրդավարական հասարակության բնութագրական կարևորագույն հատկանիշներից մեկը մարդկանց միջև փոխադարձ վստահությունն է: Սեփական նպատակներին հասնելու համար չպետք է ոտնահարել մյուսների իրավունքները: Պետք է հավատալ, որ մարդկային ներուժը անսահմանափակ է և, որ մարդը, իր վրա աշխատելով, կարող է շատ բաներիհասնել և շատ բան սովորել: Կրթական ոլորտն առաջնորդողները իրենց աշխատանքում պետք է հենվեն հենց այս մոտեցումների վրա: Ղեկավարը պետք է ձգտի ներգրավել այն մարդկանց/ ուսուցիչ, աշակերտ, ծնող/ ներուժը, ում հետ ինքն աշխատում է: Այն տնօրենները, որոնք ավելորդ ինքնավստահություն են դրսևորում՝ մտածելով, որիրենց առաջարկած տարբերակը միակը կամ լավագույնն է՝ պարտադրելով իրենց մոտեցումները մյուսներին, որպես կանոն չեն խրախուսում իրենց ենթակաների անհատական նախաձեռնությունները: Առաջնորդը չպետք է լինի եսասեր, օգտվի իր կարգավիճակից և չարաշահի իր իրավասությունները: Նրա աշխատանքը պետք է ուղղված լինի ընդհանուր գործի հաջողությանը: Ցանկացած տնօրեն պետք է մշակի «սրտի», «գլխի»,«ձեռքի» հետ կապված սեփական մոտեցումները, քանի որ վերջիններով է պայմանավորված իր աշխատանքի հաջողությունը:

Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, աղամանդե ճակատ. ահա կատարյալ առաջնորդը։



Տնօրենը պարտավոր է՝

⇒ Ճիշտ բաշխել ռեսուրսները

⇒ Մատնանշել մանկավարժական պրակտիկայի զարգացման ուղղությունները

⇒ Որոշել վերապատրաստման դասընթացի բնույթը։

⇒ Փոխադարձ պատասխանավտվություն կրել կատարած աշխատանքի համար։

⇒ Ունենալ հավասար կարգավիճակ, վստահության և փոխկապվածության ամրապնդում։

⇒ Թիմում ազատ հաղորդակցում միմյանց միջև։

1. 9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Որպես ուսումնական գործընթացի վերահսկող գտնում եմ, որ ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորվածություն է ուսուցիչների և վերահսկաողների փոխհամագործակցության, այդ ուղղությամբ համատեղ ջանքերի ներդրման միջոցով: Տնօրենը մեծ դերակատարում ունի ուսուցիչներին մղելու մասնագիտական զարգացման, համախոհ մանկավարժների տարաբնույթ թիմեր ձևավորելու գործում: ՈՒսուցչի աշխատանքը հաճախ սկսվում է այն մտահոգությամբ, թե ինչպես օգնեն իրենց աշակերտներին սովորել և <<հասնել նպատակին>>:Սակայն, բախվելով դպրոցական միջավայրում իրենց մասնագիտական բազմապիսի պարտականություններին , նրանք կարող են կասկածել ուսուցիչ լինելու իրենց ունակության և աշխատանքի ընթացքում սովորելու իրենց կարողության վրա:Ղեկավարի դերն է՝ <<մարզել>> և ուղղություն ցույց տալ , միևնույն ժամանակ նկատել և խրախուսել մեծ ու փոքր հաջողությունները: Ղեկավարի խնդիրը դառնում է այնպիսի մթնոլորտի ապահովումը, ուր ուսուցիչները լինեն լիազորված անհատներ, միևնույն ժամանակ օգնել նրանց հարմարվելու և յուրացնելու դպրոցի մշակույթի դրույթները: Աշխատանքի նմանատիպ ոճը ենթադրում է ոչ միայն տեղեկությունների հավաքում և դրանց վերաբերյալ կարծիքների ձևավորում, այլև ներառում է ուսուցիչների համագործակցության արդյունավետություն : Անշուշտ, ղեկավարը պետք է իր գիտելիքները տեղափոխի գործնական հարթության մեջ, որը նրան կօժանդակի համատեղ հաղթահարելու մասնագիտական զարգացմանն ու դասավանդման բարելավմանն ուղղված աշխատանքում առկա խոչընդոտները: Կարևորում եմ աշխատանքային այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կնպաստի ազատ և հստակ հաղորդակցմանը, կխրախուսի աշխատակիցների ակտիվ մասնակցությունն ու ազատ մտածողությունը և համագործակցությունը:Նման պայմաններում աշխատող ուսուցիչները կարող են ստեղծագործել, աշակերտների առաջադիմության աճ գրանցել, հաջողություններ արձանագրել օլիմպիադաներում,համաքաղաքային ինտելեկտուալ խաղերի ժամանակ, առարկայական մրցույթների՝ Մեղու, Կենգերուրու, Ռուսական արջուկ մասնակցության, ստեղծագործական և սպորտային մրցույթներին մասնակցելու ընթացքում:

Ուսուցչին իր կատարած աշխատանքի համար կարելի է խրախուսել դրամական պարգևով , պատվոգրով, ինչպես նաև հուշ-մրցանակով։Խրախուսանքը պետք է լինի անկեղծ ու անմիջական։Երբ ուսուցիչները հարցադրումներ են անում , տեղեկություններ տալիս կամ կիսում իրենց զգացմունքներն ու կարծիքը, վերահսկողը պետք է կարողանա նշել և իր երախտագիտությունն արտահայտել նրանց ներդրման և ձեռքբերումների համար , ցուցաբերելով առավելագույն ազնվություն և անկեղծություն , և խրախուսի նրանց հետագա մասնագիտական գործունեությանն ու աճին։

Ուսուցչի մասնագիտական աճի պլանի նմուշ

Աշակերտների բնութագրերը / Միջոցները

- Ծնողների ակնկալիքները /ներգրավվածությունը/ ուսումնառության նպատակները
- Անձնական և մասնագիտական նպատակակետերի ձևակերպում . ինչի եք ակնկալում հասնել ձեր աշակերտների հետ։Ինչպես եք աճելու մասնագիտորեն։
- Նպատակակետերին հասնելու ժամանակացույց՝ առաջադրանքներով և աշխատանքներով; Որոշեք և կազմեք ժամանակացույց;Ինչ աշխատանքներ են նախատեսված ձեր և ձեր աշակերտների համար ՝ իրագործելու ձեր նպատակները։
- Գործողությունների պլան , որը ցուցադրում է նպատակակետերին հասնելու ապացույցներ։Ինչպես կիմանաք , որ հասել եք ձեր նպատակներին։
- Ներկայացված պլանի արդյունքների գնահատում ։Որքան լավ աշխատեցիք ձեր ուսուցողական և մասնագիտական նպատակներն իրագործելիս։
- Ինչը կանեիք այլ կերպ , ինչ պետք է անեք հաջորդ տարի։

ՈՒսուցչի դասավանդումը գնահատելու համար հարկավոր է նկատի ունենալ ուսուցողական նպատակը , դասավանդման – յուրացման համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ջանքերի արդյունքները

Հաջողություններ արձանագրելիս տնօրենությունը պետք է արժևորի թե՛ուսուցչի, թե՛ աշակերտի, թե՛ այն բոլոր աշխատակիցներին, որոնք նպատակ են դնում և դպրոցի համար բարձր վարկանիշ ապահովում: Խրախուսելու համար պետք է արժևորել ուսուցչի աշխատանքը ,ունենալ նախապես մշակված ձևաչափ , ընդունել որպես խրախուսման չափանիշ , ինչու չէ՝ նաև կատարած աշխատանքի հաշվետվություն;Օրինակ՝ հաշվի առնել

- Ուսուցման որակ
- Օրինակելի դասեր
- Ձեկույց մ/մ նիստում
- Օլիմպիական աշակերտ ունենալը քաղաքային, մարզային, հանրապետական փուլերում
- Միջոցառումների կազմակերպում՝այդ թվում աշակերտները իրազեկված են հալածանքի , բռնության , օտարման , թմրամոլության , բուլինգի ,թրաֆիքինգի բացասական երևույթին
- Ներքին աշխատանքային կարգապահության մակարդակը
- Մասնակցությունը ԿԱՊԿ ունեցող սովորողի կրթական գործընթացին:
- Ծնողների կողմից արժանացել է շնորհակալագրի

Խրախուսման նման մոտեցումը ուսուցիչների մոտ կառաջացնի մոտիվացիա, պարգևատրում, շնորհակալագիր, դրամական պարգև ստանալու նպատակով ինքնակրթվելու: Ինքնակրթության մակարդակը բարձրացնելու նպատակով ուսումնական տարվա հենց առաջին օրվանից պետք է մշակված ձևաչափ տրամադրել բոլոր ուսուցիչներին:

Քանի որ հիմա բաց ձևաչափով կազմակերպվում են վերապատրաստումներ, ապա ուսուցիչը ինքը կարող է որոշել, թե որտեղ և որ թեմայից է ուզում վերապատրաստվել: Այն կարող է իրագործել դասերից հետո, իսկ փորձի փոխանակման նպատակով նաև մենթոր ուսուցիչների, փորձառու մասնագետների մոտ կձևավորեմ դասեր լսելու մշակույթ :

Ինքնակրթության գնահատման ձևաչափ

- Մասնակցությունը վերապատրաստման դասընթացին:

- Տարվա ընթացքում ուսումնասիրած մեթոդական գրականությունը։
- Ինքնակրթության թեմա։
- Գործնական արդյունք՝ զեկուցում, բաց դաս, փորձի հաղորդում, ժամկետ։

Ուսուցիչը դադարում է ուսուցիչ լինելուց, եթե չի ինքնակրթվում։ Իսկ ինքնակրթվելուն նպաստում է դպրոցի տնօրենը՝ իր հստակ պահանջով։

Վերոնշյալ թերթիկը կարող է մշակման ենթարկել և մարտահրավերների պահանջին համապատասխան նոր պահանջներ ստանալ։

1.10 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի՝ըստ իրականացվող հիմնական /ընդհանուր/ ծրագրի՝ կախված սովորողների թվից , այս ուսումնական տարվանից ՝ արդեն դասարանների թվից։ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ։Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունը տեղադրվում են դպրոցի կայքում։

Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.

- ✓ Աշխատավարձ և դրան հարմարեցված վճարումներ
- ✓ Կոմունալ վճարներ
- ✓ Սնունդ
- ✓ Այլ ծախսեր

Ուսումնական հաստատության մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները տնօրինվում են արդյունավետ և հաստատությունը կարողանում է ներգրավել լրացուցիչ միջոցներ.

1. սովորող-ուսուցիչ հարաբերությունը. 3,6

2. սովորող - սպասարկող-վարչական անձնակազմ հարաբերությունը. 6,9

3. դասարանների միջին խտությունը. 6,9

4. դասարանների միջին խտությունը. 6,9

5. մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը. 618,9

6. ուսուցչների միջին աշխատավարձը. 146255

7. վարչական աշխատողների միջին աշախատավարձը. 119000

8. սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը. 113453

9. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը.0 9. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը. 150000

10. հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը. 0
11. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. 43.835.300

12. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. 3.190.100 13. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը:111000

Դպրոցի ֆինանսական հնարավորության սահմանում գնումների պլանով կնախատեսեմ ուսումնական նպատակով ձեռք բերել քարտեզներ, գունավոր, հրապուրիչ պաստառների պատրաստման համար շատ կարևոր է ունենալ գունավոր տպիչ սարք, անհրաժեշտության դեպքում դասի համար հանել նյութեր, որոնք կմոտիվացնեն սովորողներին։ Գունավոր մատիտներ, թղթեր, մարկերներ, ջնջոցներ , ջրային ներկելու գրքեր , ձայնային ուսուցման բազմաբովանդակ գրքեր , խոսող քարտեզներ և նմանատիպ նյութերի ձեռքբերումը անհրաժեշտ է, սակայն առանց գերծախսերի։ Ուսումնական նպատակով ծախսերը դրական ազդեցություն կունենա դասի արդյունավետության բարձրացմանը։

Ֆինանսական ծախսեր արվել է՝ ըստ գնումների պլանի և ուսուցիչների ատեստավորմանն ուղղված վերապատրաստող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի։

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ուսուցիչների ատեստավորմանն ուղղված դպրոցի և վերապատրաստող կազմակերպությունների հետ պայմանագրերի հիման վրա կատարվող վճարումներ: • Ըստ օրենսդրական պահանջների՝ արդյունավետ ֆինանսների կառավարում: • Պետական բյուջեից ստացվող ֆինանսների միջոցների կայուն և ժամանակին փոխանցումներ:	• Ձեռնարկատիրական գործունեություն, արտաբյուջեի բացակայություն: • Դպրոցի ֆինանսական միջոցները բավարար չեն լրացուցիչ ծախսերի համար: • Լրացուցիչ կրթական ծրագրեր չեն իրականացվում: • ԿԱՊԿ ունեցող սովորողների համար հարմարեցված հենակների բացակայություն:

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1

1. Ուսուցման և ուսումնառության որակի ապահովում՝ ըստ սովորողների չափորոշչահեն վերջնարդյունքների

2. Սովորողների անհատական կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքների իրականացում

Գործողություն	Կատարող	Կատարման ժամկետ	Ֆինանսավորում
ԲՏՃՄ/ բնագիտական, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկական բնագավառի զարգացում՝ բնագիտու- թյան ՏՀՏ և	Ուսումն. աշխ.գծով տեղակալ , տնօրեն, ՄՄՆ	2023 – 2028, ըստ ուսումնական տարիների	Հավելավճար՝ ըստ կատարված աշխատանքի որակի

մաթեմատիկայի ուղղությամբ			
Օլիմպիական և այլ խմբակների ձևավորում	Ուսումն.աշխ.գծով տեղակալ, ՄԿԱԳ, ՄՄՆ ուսուցիչ	2023 – 2028, Ուստարվա ընթացում	Պետբյուջե
Դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու յուրացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների զարգացումը	Ուս.աշխ.գծով տեղակալ, տնօրեն, ՄՄՆ	2023 – 2028	ֆինանսավորում չի պահանջում

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2

Մանկավարժական համակազմի հետ տարվող աշխատանքների ընդլայնում, ՏՀՏ և մեթոդամանկավարժական կարողությունների զարգացմանն ուղղված սեմինարների, դասընթացների իրականացում:

Գործողություն	Կատարող	Կատարման Ժամկետ/թթ./	Ֆինանսավորում
Ապահովել համակար-գիչների պարտադիր նվազագույն թվաքանակ, որպեսզի մանկավարժական աշխատողները ազատժամերին կարողանանիրականացնել իրենց պաշտոնական պարտականություններից բխող գործառույթները նստիպված չլինեն դահիրականացնել աշխա-տանքից հետո՝ տանը	Տնօրեն, համակարգող	2023 – 2028թթ	Բարերարներ
Մեդիագրագիտությունը դարձնել պարտադիր ոչ միայն սովորողների, այլև մանկավարժական համակազմի բոլորանդամների համար՝ անկախ տարիքից	Ուսումն.աշխ.գծով տեղակալ, ՄԿԱԳ, ՄՄՆ Ուսուցիչ	2023 – 2028, Յուրաքանչյուր ուստարում	Ֆինանասվորում չի պահանջում
Առնվազը մեկ լաբորատիորիայի հագեցվածություն	Տնօրեն, համակարգող,	2027	Պետբյուջե
Դպրոցն ապահովել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կառավարման համակարգով	Տնօրեն, օպերատոր, համակարգող	2023 – 2028	Ուսումնական մասով գնումների Պլանով նախատեսված ծախս

Կանոնակարգել փաստա-թղթերի պահպանման նարխիվացման գործառույթները	Տնօրեն, գործավար	2023 – 2028թթ	Ֆինանս չի պահանջվում
Դպրոցի հանդիսությունների սրահի և ստորտդահլիճի պայմանների բարելավում	Տնօրեն, լիազոր մարմին	2023 – 2028թթ. ըստ առաջնահերթության	Պետբյուջե բարերար
SMART գրատախտակի ձեռքբերում	Տնօրեն	2023 – 2028թթ	Բարե բարներ, համայնքի ղեկավարի աջակցություն
Բարերարների,հովանա-վորների ներգրավում	Տնօրեն	2023 – 2028թթ	Ֆինանսական միջոցներ չի պահանջում
Շրջանավարտների խորհուրդների ստեղծում	Ուսումն.աշխ.գծով տեղակալ, ՄԿԱԳ, ՄՄՆ	2023-2028թթ	Ինքնաֆինանսվորում
Համագործակցություն իրավապահ մարմինների հետ	Ուսումն.աշխ.գծով տեղակալ, ՄԿԱԳ, ՄՄՆ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Դպրոցի ֆինանսական կայունության ապահովում և ֆինանսական միջոցների արդյունավետ տնօրինում	Տնօրեն Համակարգող	2023 – 2028թթ	Պետբյուջե
Ուսումնական միջավայրի համապատասխանեցում ժա-մանակակից ստանդարտ- ներին, սովորողների և դասա-վանդողների համար հաճելի, մոտիվացնող ուսումնաստեղ-ծագործական միջավայրի ապահովում	Տնօրեն և աշխատակազմ	2023 – 2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ միջոցներ

Գիտելիքներով հարուստ, վերլուծական հմտություններ, ինքնուրույն կարծիք և տեսակետ ունեցող , պետականամետ, հայրենասեր, կարեկ- ցող, սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող անհատի ձևավորում	Ուսուցիչներ ՄՄՆ ՈՒԱԳՏ	2023 – 2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Մրցունակ, մոտիվացված, աշակերտակենտրոն և կոմ- պետենտ անձնակազմի ձևա- վորում	Լիազոր մարմին, տնօրեն, մանկավարժական համակազմ	2023 – 2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Տեխնոլոգիական նորամուծությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ կազմակերպել անձնակազմի համար:	Տնօրեն ՈՒԱԳՏ	2023 – 2028թթ	Պետբյուջե
Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարման կարողությունները՝ ծրագրերի մշակման,ռեսուրսների ներգրավման, կոմունիկացիայի,վարչական աշխատանքի արդիականացման, արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով	Համակարգող Տնօրեն	2023 – 2028թթ ամենամյա աշխատանք	Ինքնակրթություն, Ֆինանսավորում չի պահանում
Տեղայնացնել դպրոցների կառավարման ներկա մոդելները, փորձելով տեղայնացնելով լավագույն փորձը:	Տնօրեն	2023 – 2028թթ ամենամյա աշխատանք	Ֆինանսավորում չի պահանջվում

Մասնագիտական կողմնորոշման նպատակով՝ այցելություն տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ	Տնօրեն	2023 – 2028թթ Յուրաքանչյուր ուսումնական տարվա Ընթացքում	Հովանավորնոր
Կազմակերպել քննարկումներ շրջակա միջավայրի պահպանության թեմաներով	Տնօրեն , ԴԱԿ, ՄԿԱ	2023 – 2028 Հաշվետու ժամանակահատ վածի ամեն ուս տարում	Նախագծային աշխատանքի դեպքում ֆինանսավորումը աշխատանքի ծավալից կախված
Ավելացնել վերապատրաստող ուսուցիչների թիվը՝ դպրոցը դարձնելով նորարարությունների կենտրոն:	Տնօրեն , ուս ումնական գծով համակարգող ,	2023 – 2028 Համաձայն կարգի	Ինքնաֆինանսավ որում
Ուսուցիչների մոտիվացիան խթանելու նպատակով ներքին գնահատման հիման վրա շարունակել պարգևատրումների կիրառման պրակտիկան:	Տնօրեն , խորհրդակցական մարմիններ	2023 – 2028 Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին	Արիմիություն, Բարերար
Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի շարունակաբար իրականացում:	Տնօրեն , համակարգող	2022 – 2028 Ըստ պահանջի	Պետբյուջե
Պարբերաբար հրավիրել հեղինակավոր մարդկանց, հայտնի գործարարների , գիտնականների , ոլորտի առաջատար մասնագետների, դպրոցի լավագույն շրջանավարտների , շարունակել	Տնօրեն , տնօրենի տեղակալներ	2023 – 2028 Ուսումնական հաշվետու բոլոր տարիներին	Ֆինանսավորում չի պահանջվում

/ 1000+1 հարց / հանդիպումը իրենց փորձով կիսվելու համար:			
Դասավանդման որակի վերահսկման նպատակով՝ ուժեղացնել դասալսումները:	Տնօրեն , տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մ/մ նախագահներ	2023 – 2028 Ամբողջ ուստարվա ընթացքում	Առանց ֆինանսավորման
Փորձի փոխանակման նպատակով սերտ համագործակցել այլ դպրոցների հետ :	Տնօրեն, մ/մ նախագահներ	2023 – 2028	Ինքնաֆինանսա-վորում
Խրախուսել ակտիվ նախաձեռնություններով հանդես եկողներին՝ և՛ աշակերտներին և ուսուցիչներին:	տնօրեն , համակարգող, կ/խ,Մ/Մ ,ԾԽ, ԱԽ նախագահ-ներ	2023 – 2028 ըստ կատարման ժամկետի	Արհմիության որոշում

6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

Կրթության որակի և առաջադիմության ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման չափանիշ

Կրթության որակը և առաջադիմությունը դպրոցում հստակեցնելու , ինչպես նաև առարկայի ուսուցչի աշխատանքը որակավորելու համար դպրոցում կազմակերպվում են տարբեր ձևաչափով աշխատանքի վերլուծություններ: Ամենից տարածված ու արդյունավետ գնահատման եղանակ է գրավորների արդյունքների վերլուծությունը:

- ✓ Ներկայացնել գրավոր աշխատանքների արդյունքների դինամիկան:
- ✓ Քննությունների արդյունքների վերլուծություն և ամփոփում, որտեղ երևում է քննությունների արդյունքների համապատասխանությունը տարեկան գնահատականներին, բարձր և ցածր գնահատականների հարաբերակցությունը, արդյունքները ըստ հանրակրթության աստիճանի:
- ✓ Սովորողների առաջադիմության վերլուծություն և գնահատում:

$$Ա\,\% = \frac{(N_5 + N_4 + N_3) * 100\%}{N}$$

Որտեղ՝ Ա%- առաջադիմության տոկոսն է

N_5-գերազանցիկների թիվն է

N_3-չառաջադիմողների թիվն է

N_4-հարվածայինների թիվն է

N-սովորողների ընդհանուր քանակն է:

Առաջադիմության որակի ցուցանիշների հաշվարկում

$$Ո\ \% = \frac{(N5 + N4) * 100\%}{N}$$

Որտեղ՝ Ո%- առաջադիմության որակի ցուցանիշն է

N_5-գերազանցիկների թիվն է

N_4-հարվածայինների թիվն է

N-սովորողների ընդհանուր քանակն է:

Դասավանդման կայունության ցուցանիշի հաշվարկ

$$K = \frac{K\ \%}{K_{xy}\%}$$

Որտեղ՝ K-դասավանդման կայունության ցուցիչը թույլ է տալիս պարզել, թե որքանով է դասավանդման որակի ցուցանիշը պահպանում իր կայունությունը տարեցտարի:

K_{xy} %-Անցյալ տարվա առաջադիմության /որակի/ ցուցիչ

K%-Ընթացիկ տարվա դասավանդման որակի ցուցիչ:

Եթե K=1, նշանակում է փոփոխություն չի կատարվել:

K> 1, վկայում է բարելավման միտման մասին:

K< 1, վկայում է վատթարացման միտման մասին:

Ընթացիկ որակի ստուգման համար մշակվում է աղյուսակ՝ տնօրենական գրավոր աշխատանքների:

Առարկա	Դաս	Աշ թիվ	Մասն թիվ	Գնահատական										Որակ		Առաջադ-	
				1	2	3	4	5	6	7	8	9	10	Iկ-	IIկ-	Iկ-	IIկ-

Տարեվերջյան ստուգման ռուբրիկ

Դասարան	Ստուգման մասնակից աշ.թիվ	Առարկա Գրավորի տեսակ	I կիսամյակ		II կիսամյակ		ԱՃ	Նվազում
			Որակ	Առաջ	Որակ	Առաջ		

Գնահատման համակարգերի բնութագրերը կարող են ուղղորդել ղեկավարներին ուսուցիչների կատարողականի գնահատման առավել հետևողական, հուսալի և արդարացի համակարգեր մշակելիս: Ինչպես ասում են, եթե առկա է հստակ սահմանված մոդել, առկա է ավելի մեծ վստահություն ուսուցչի և ղեկավարի միջև:

Նվիրվածությունը գնահատման համակարգերի նկատմամբ խիստ կարևոր է: Առանց բոլոր մակարդակներում ուսուցչի գնահատման գործին օժանդակելու, գործընթացը չի հասնի ցանկալի արդյունքի:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման չափանիշ կարող է հանդիսանալ

- Դասղեկի ժամերի թիվը
- Խորհրդակցություններում զեկույցների թիվ և համապատասխանություն
- Դասալսումների թիվ և վերլուծություն
- Միջոցառումների թիվը
- Ժողովների թիվը
- Դասարանի կողմից խնամվող ծառերի թիվը
- Սովորողների բացակայությունը:

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ , ՆԵՐԱՌԱԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատման հիմնական նպատակը ուսումնական գործընթացի ճիշտ պլանավորումն ու զարգացումն է:Ներառական կրթության համակարգում գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին արձագանքելու սովորողների տարաբնույթ առանձնահատկություններին:Գնահատման աշխատանքներին հաջորդում է որոշման ընդունումը այն մասին , թե ինչպես պետք է ընթանա սովորողի հետագա ուսուցումը :Այս հարցում կարևոր են ուսուցիչների համագործակցությունը և համապատասխան մասնագետների հետ խորհրդակցումը:Ծնողները , ընտանիքները և հենց իրենք՝ աշակերտները , նշանակալից ներդրում ունեն գնահատման գործընթացում:Սովորողների առաջադիմության գնահատումը տեղեկատվություն է տալիս դպրոցում դասավանդման արդյունավետության մասին:ՈՒսուցիչները պետք է ներդնեն բոլոր ռեսուրսները՝աշակերտների ընդունակությունները տարբեր բնագավառներում բացահայտելու համար:Որոշակի օժանդակ նյութերի միջոցով կարելի է պարզել , թե ինչում պետք է նրանց աջակցել:Այդ դիտարկումներին մասնակից պետք է դարձնել ուսուցիչներին , մասնավորապես ուսուցչի օգնականներին , մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետներին , ծնողներին:

Սովորողի գնահատումը՝ ըստ ԱՈՒՊ-ի պահանջների

Սովորողի անուն-ազգանուն	Առարկա	Կարողանում է	Կարողանում է մասամբ	Չի կարողանում

Գնահատումը արվում է բոլոր այն առարկաներից, որում ընդգրկված է սովորողը։ Նմանանատիպ գնահատման ձևաչափ կարելի է մշակել նաև ծնողի համար, ով անձամբ կստուգի իր երեխայի առաջընթացը։

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ		Աճ
Առարկա	Կարողանում է՝ թվարկել այն գործողությունները , որը ընդուված էր որպես նպատակ	Առարկա	Կարողանում է	

Աղյուսակները հնարավորություն են տալիս գնահատելու սովորողի տեսողական ընկալումը , լեզուն , ճանաչողական ունակությունները , երևակայությունը , ինչպես նաև գտնել միջոցներ , և համապատասխան ռուբրիկների միջոցով ստուգել շոշափողական և շարժողական ակտիվությունը ։

Համատեղ . թիմային աշխատանքը կարելի է չափել ռուբրիկով

Միասնական աշխատանքի կարծիքների համատեղում	Ծնող	Վարչական աշխատող	Համայ ն ք . ն երկ	ՏՄԱԿ
1. Գրեթե միշտ . 2. Հաճախակի 3. Երբեմն 4. հազվադեպ				
ՈՒսումական միջավայրը դրական դիրքորքշում ունի ներառական կրթության նկատմամբ, ձևավորված է հանդուրժողականության մթնոլորտ				

ԿԱՊԿսովորողը ընդգրկված է արտադասարանական միջոցառումներին,				
Դրսևորվում է հավասար վերաբերմունք անկախ նրանց միջև եղած տարբերությունից և առանձնահատուկ կարիքից				
Խմբային աշխատանքների ընթացքում միմյանց օգնում են , քաջալերում , լսում:				

Դպրոց - համայնք կապերի , ծնողական համայնքի գործընկերների հետ համագործակցության , արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշ

Ուսումնական խմբակների գործունեությունը և անհրաժեշտությունը որոշվում է սովորողների առաջարկությամբ՝ ՀՊՉ-ով սահմանված առաջնահերթություններով և դպրոցի զարգացման նպատակներով: Խմբակները հաստատվում են տնօրենի կողմից: Խմբակը կարող է վարել ուսուցիչը կամ համապատասխան որակավորում ունեցող մասնագետը:Խմբակը ստեղծվում է սովորողների՝

- արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպման համար,
- նախասիրությունների, հետաքրքրության տարբեր ոլորտների (գիտություն, արվեստ, զբոսաշրջություն, հայրենագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ և այլն) վերաբերյալ ուսումնական ծրագրերի իրականացման համար,
- սոցիալականացման և ինքնուրույն կենսագործունեության համար,
- մասնագիտական կողմնորոշման համար:

Դպրոցում գործում է մասնագիտական կողմնորոշման խմբակ, որը ձևավորված է Կրթության կառավարման լիազորված մարմնի որոշմամբ, ՄԽ-ի , ԾԽ-ի որոշմամբ, վերահսկում է ՄԿԱ տեղակալը: Տիպային և հեղինակային ծրագրերը երաշխավորվում է ԿԳՄՄՆ-ի կողմից և մինչև հունիսի 15-ը ներկայացվում է փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Խմբակի միջոցով լրացվում է սովորողի ճանաչողական , ստեղծագործական , ինքնագնահատման ու ինքնավստահության կարողունակությունները:

Երկարօրյա խմբերը ստեղծվում են հաստատության կողմից դրանցում ընդգրկվող սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա:Դպրոցում դեռևս չի գործում երկարօրյա խմբակ , որի նպատակը ետ մնացող աշակերտների մոտ ակադեմիական գիտելիքների բացթողումների մակարդակը բարձրացնելն է:Իմ խորին գիտակցմամբ այն շատ կարևոր է , սակայն աշխատատար գործընթաց է :Այս առումով անհրաժեշտ է՝

- համագործակցել ծնողների հետ
- հանդիպել համայնքի ղեկավարին , քննարկել երկարօրյա ուսուցման և արտադպրոցական խմբակների արդյունավետության կարևորությունը կրթության որակի , բովանդակության արդյունավետ կազմակերպման համար :
- ձևավորել շահառու կողմերի համագործակցություն

Քանի որ ԿԶՆԱԿ հիմնադրամը և երաշխավորված շատ ՀԿ-ներ կազմակերպում են վերապատրաստումներ ուսուցիչների համար, ապա կփորձեմ ուսուցիչներին ներգրավել վերապատրաստումներին:

Ռիսկերը

⇒ Ծնողների, սովորողների և ուսուցիչների ցանկության բացակայություն

⇒ Քաղաքից ընդգրկված սովորողներ

Ռիսկերը վերացնելու գործողությունները

⇒ Տեղեկատվության թափանցիկություն

⇒ Իրազեկում

⇒ Մանկավարժների վերապատրաստում

Ժամանակահատվածը

⇒ Անհրաժեշտ պայմանների առկայության և ծնողների համաձայնության դեպքում

Պատասխանատուներ

⇒ Տնօրեն, ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, ուսուցիչ

Երկարօրյա խմբակի ուսուցիչը տվյալ դպրոցում աշխատող ուսուցիչ չպետք է լինի կամ պետք է թերծանրաբեռնվածություն ունենա: Ծանրաբեռնվածությունը կհանգեցնի ոչ արդյունավետ աշխատանքի:

Արտադպրոցական խմբակի կարևորությունը , հատկապես ԲՏՃՄառարկաների որակի բարձրացմանն ուղղված , պետք է քննարկել ծնողների հետ , առաջարկել սովորողների մասնակցությունը ԹՈՒՄՈ արտադպրոցական խմբակին:

Նպատակ՝

- Բարձրացնել ԲՏՃՄ առարկաների որակը

Ռիսկեր՝

- հեռավորությունը կենտրոնից
- Սովորողների թույլ կարողունակություններ ,
- ցանկության բացակայություն
- Ժամանակի ծանրաբեռնվածություն

Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- Կազմակերպել հանդիպումներ , ծանոթանալ ոլորտի բոլոր ճյուղերին
- Կազմակերպել ժամանակի հասանելիություն

Գնահատման ռուբրիկ

Սովորողների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման գնահատման չափանիշ

Ռուբրիկ 1

h/h	Բովանդակություն	լավ	բավար	անբավ
1	Սովորողների դաստիարակվածության աստիճան			
2	Դասղեկական աշխատանքի որակ			
3	Ծնողների մասնակցությունը դաստիարակչական աշխտանքներին , խմբակներին ,			
4	Համադպրոցական միջոցառումների անցկացման որակ			
5	Ռազմահայրենասիրական մասայական աշխատանք			
6	Լրացուցիչ կրթության կազմակերպում			
7	Բարոյական և գեղագիտական դաստիարակության կազմակերպում, աշխատանք ետ մնացող երեխաների հետ			

Ռուբրիկ 2

	Գրեթե միշտ	հաճախակի	երբեմն	հազվադեպ
Մասնագիտության մոտիվացիա Միմյանց հարցում արվեստիսիրած ճյուղերից՝երաժշտություն , սպորտ ,ֆիլմ				
Մասնագիտություն Մասնագիտական կողմնորոշման ամրապնդման շրջանակներում կազմակերպվում է այցելություն տարբեր կազմակերպություններ և մտքերի փոխանակում				

Հալածանքի , օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ

Դպրոցը անհնար է պատկերացնել միայն ուսուցման որակի ցուցանիշներով: Այդ իսկ պատճառով ուզում եմ առանձնացնել նաև դաստիարակության գործընթացը խթանող մի քանի կարևոր գործոններ:Յուրաքանչյուր ծնող տարիների ընթացքում ուսումնասիրում է ,թե որքանով է բարենպաստ և անվտանգ այն միջավայրը , որտեղ պետք է սովորի իր երեխան : Ոչ միայն շենքային պայմանները , որակյալ կրթությունը և համերաշխ աշխատակազմը , այլև սովորողների վաքագծի կանոններին տիրապետելը, կրտսեր և

միջին տարիքի դպրոցականներին ուշադրության կենտրոնում պահելը , կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններին տիրապետելը շատ կարևոր է։Երեխաների , հատկապես տղաների համար ֆիզիկական ուժի կիրառումը ինքնահաստատման միջոց է դառնում։Ստեղծված ոչ ֆորմալ ստորակարգային / հիերարխիկ / հարաբերությունները ընդունվում են երեխաների կողմից։Այս վարքագիծը հանգեցնում է բռնության տարածմանը ։Ագրեսիվ վարքագիծ ունեցող երեխաների գործողությունները կանխելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել հատուկ ծրագրեր և մասնագիտական մոտեցումներ։

Բուլինգի դրսևորումներ են համարվում՝

⇒ Խոսքային ՝ ծաղր , նվաստացում , սպառնալիք

⇒ Հոգեբանական՝ շորթում , ունեցվածքի փչացում , գողություն , սպառնացող թշնամական հայացք և խոսք։

⇒ Սոցիալական ՝ խուսափում , անտեսում , համատեղ գործունեության ձևավորման տարեկիցների ներգրավածության խոչընդոտում , սադրանք , բամբասանքի տարածում , հալածվող երեխայի հետ այլ երեխաներին չշփվելու պարտադրանք ,մեկուսացում / վերջինս նկատվում է նաև աշխատանքային կոլեկտիվներում /

⇒ Ֆիզիկական ՝ հրում , հարվածում , վայր գցում , ցավեցում , ֆիզիկական ազատության սահմանափակում ;

Բուլինգի պատճառներից մեկը բուլինգ իրականացնող երեխաների մեջ այլոց ապրումակցելու և կարեկցելու կարողությունների անբավարարությունն է կամ բացակայությունը ։

Իրականացվող գործողություններ ՝

- Կազմակերպել բաց դասեր , իրազեկ հանդիպումներ
- Դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ խնդրին , երևույթի փաստացի ազդեցության մասին։
- Աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները
- Լսել երկու կողմին էլ ՝առանց նվաստացումների
- Կապ պահպանել հոգեբանի հետ

- Լինել լավ օրինակ երեխայի համար

  Հակված եմ դպրոցում բացառել բոլոր կարգի բռնությունները , ստեղծել <<Բռնությունից զերծ դպրոց. >>:

ՏՀՏ կիրառումը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը, հաղորդակցմանը, հմտություններին:Մեդիագրագիտությունը ժամանակակից կրթության ամենաանհրաժեշտ բաղադրիչներից է ։Յուրաքանչյուր երեխա, դեռահաս , երիտասարդ և մեծահասակ կարողանում է օգտվել համացանցից:Մեդիագրագետ երեխան ինքնին տեղեկացված քաղաքցի է և կարողանում է տեղեկատվական հոսքերից քաղել իրեն պետքականը և օգտակարը:Նոր ուսումնական տարում թվային գրագիտությունը կդասավանդվի 2- րդ դասարանից ։ Կարծում եմ արդյունավետ որոշում է , քանի որ համացանցի ամենախոցելի խումբը երեխաներն ու դեռահասներն են ,ովքեր պետք է իմանան `որ աղբյուրներից պետք է օգտվել ։Դպրոցում իրականացվող միջոցառումների շարքում անպայման պետք է ընդգրկել մեդիադաշտի օգտակար և վնասակար հատկությունները իրազեկող հանդիպումներ ։Սովորողները , և ոչ միայն , պետք է պաշտպանվեն սխալ և վնասող բովանդակությունից և հետևեն , որ մեդիա բովանդակությունը չվնասի առողջությանը ։

Պետք է կազմակերպել իրազեկումներ՝

- Հանդիպումներ երիտասարդ բլոգերների հետ
- Ծնողներին ՝ պաշտպանվելու վտանգների մասին բազմաբնույթ սեմինարներ ՝
- <<ինչ կարող են անել ծնողները , երեխաներին թվային աշխարհում պաշտպանելու համար >> , <<Ինչ պետք է իմանալ կիբերբուլինգի մասին>> , <<Համացանցում անվտանգ լինելու կանոնները>> թեմաներով.

Դպրոցում մշտապես կարող է գրանցվել նաև թմրանյութերի , ալկահոլի , ծխախոտի օգտագործման դեպքեր , որը կանխելու համար մշակվել են մեխանիզմներ ՝ բացառապես հիմնված ուշադրության , իրազեկման և վերահսկման վրա։

Գնահատման ռուբրիկ

Բովանդակություն	ամսաթիվ	դասարան	Միջոց-ան վ ան
Ալկահոլի , ծխախոտի , թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքեր			
Ալկահոլի, ծխախոտի , թմրամիջոցների օգտագործումը. կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրեր , միջոցառումներ			
Մարմնական վնասվածքներ հասցնելուդեպքեր, դրանց բացահայտմանն ուղղված միջոցառումներ			
Սովորողների նկատմամբ բռնության , ֆիզիկականկամ հոգեբանական ճնշման դեպքեր			
Ծնողների իրազեկում , անվտանգ միջավայրի ձևավորում			

Դաստիարակության գործընթացի կազմակերպումը դպրոցում

<<Դաստիարակությունը կարող է մարդուն դարձնել առաքինի Սոկրատես և կամ այլանդակ Ներոն:Դաստիարակությունն ամեն ինչ է՝ և կյանք,և մահ,և փրկություն,և կործանում>>

Բելինսկի

Կրթությունն առանց կրթական միջավայրի դատապարտված է:Դպրոցը ոչ միայն ուսուցանում, այլև դաստիարակում է մարդուն:

Ուսուցումն այն ծաղկի թերթերից միայն մեկն է,որ կոչվում է դաստիարակություն:

Դաստիարակությունը՝որպես հասարակական գործընթաց,կրում է սոցիալ-տնտեսական իրադրության բոլոր բարդությունների արտացոլումը:Սոցիալական գործընթացների ակտիվացման ուժեղացումը համաշխարհային տենդենց է,որը նպաստում է հասարակության նոր տեսակի ձևավորմանը:Այդ տեսակը,որն այս պահին ձևավորվում

է,ենթադրում է սերունդների համագործակցություն և իրարից սովորելու գործընթաց:Տեղի է ունենում աշխատանքային և մանկավարժական մակարդակներում գաղափարների և դաստիարակչական պրակտիկայի վերընկալում:Ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների նոր համակարգեր:Այսօր մանկավարժության պրակտիկայում լուրջ դեր պետք է հատկացվի անհատական անձնային մոտեցմանը անձի դաստիարակության մեջ:Ակնհայտ է դառնում բազմակողմանի ներդաշնակ դաստիարակված անհատի փոխարեն այնպիսի հատկանիշների ձևավորումը,ինչպիսիք են կյանքում ինքնորոշումը ինքնազարգացումը, հասարակական օգտակարությունը,անձնական երջանկությունը,սեփական ուժերի և հնարավորությունների ինքնիրացումը,իհարկե՝ հասարակական կարիքներին համապատասխան

Դպրոցը պետք է զարգացնի դաստիարակության հետևյալ ուղղությունները՝

ա) Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ինչպես ասել է մեծն փիլիսոփա Ցիցերոնը <<Մեզ համար թանկ են երեխաները,մերձավոր ազգականները,բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառիմեջ՝հայրենիք>>

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար մեծ դեր են խաղում հայրենիքին նվիրված տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը,այցելությունները պատմական նշանակության հուշահամալիրներ,հանդիպումները հայրենիքի պաշտպանության գործում ներդրում ունեցող հերոսների հետ: Նմանատիպ միջոցառումները սովորողների մեջ արժևորում և բարձրացնում է գիտակցական պատկերացումները հայկական պատմական հողերի վրա հայերի ապրելու անկապտելի իրավունքի Արցախյան ազատամարտի մասնակիցների նկատմամբ , պատմական հայրենիքի համար մարտնչելու պատրաստակամ սերնդի կազմավորմանը : ՆԶՊ և հայոց պատմություն առարկաների դերի բարձրացումը,այցելությունները զինվորական զորամասեր,9-12-րդ դասարանցիների համար բանավեճերի,շարադրության մրցույթների կազմակերպումը սովորողների մեջ կձևավորի մշակութային արժեքներ , հպարտության և պատասխանատվության զգացում ծննդավայրի և հայրենիքի հանդեպ:

բ)Բարոյական դաստիարակություն

<<Սկզբում սովորիր բարի բարքեր,նոր միայն իմաստություն>>:Այս գաղափարից ելնելով՝բարոյական դաստիարակությունն ունի ոչ միայն հոգևոր և բարոյական ազգային ակունքներ,այլ նաև ֆիզիոլոգիական և հոգեբանական հիմքեր:

Բարոյական դաստիարակությունը պետք է համապատասխանեցվի սովորողի տարիքային,սեռային,ընտանեկան առանձնահատկություններին:Հասարակությունն այս գործընթացի վրա թողնում է իր ուրույն ազդեցությունը:Հասարակությունը դաստիարակության գործընթացի վրա ազդում է հետևյալ փոփոխություններով՝

ա)Հասարակության շարունակական տարբերակում,շերտավորում

բ)Տնտեսական ոչ ապահով և ապահով ընտանիքների կազմալուծում

գ)Առողջական ինչպես ֆիզիկական,այնպես էլ հոգեկան խնդիրներով երեխաների թվի աճ և ինտեգրման բարդություններ

դ)Բացասական երևույթների տարածվածությունը(թմրամոլություն,հարբեցողություն, կիբերբուլինգ ,բուլինգ , թրաֆիքինգ և այլն):

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում առկա է պետական խորհրդանիշների հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ծրագիր: Պետական խորհրդանիշների / ՀՀ զինանշան, ՀՀ դրոշ ՀՀօրհներգ / ազգային ինքնության և անկախության տարրերի / հայոց լեզու, ընտանիք, սուրբ եկեղեցի , հոչակագիր, Սահմանադրություն, ՀՀ նախագահ ,Ազգային ժողով , Հայոց բանակ , մայրաքաղաք , ազգային դրամ, գործադիր և դատական մարմիններ/ պահպանումը և տարածումը: Հաճախակի հնչում է ՀՀ օրհներգը:

Դաստիարակության մյուս ոլորտները՝ գոյապահպանական, աշխատանքային, գեղագիտական, հումանիստական, ֆիզիկական՝ վերը նշվածների հետ միասին ընդգրկվում է դպրոցի տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանում:

ՈՒսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչը՝ վերահսկողությունը, ունի բնութագրող , վերափոխող , խթանող , ուսուցանող , զարգացնող և դաստիարակող նշանակություն , և նրա հաջող իրականացմամբ է պայմանավորված կրթական գործի որակը:

ԴԶԾ-ի նպատակները, խնդիրները, խնդիրներից բխող գործողություններ, պատասխանատուներ , ժամկետներ , գնահատման չափանիշներ

ՈԼՈՐՏ՝ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ Նպատակ 1 Բարձրացնել մանկավարժական համակազմի մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը, անհրաժեշտության դեպքում համագործակցելով մենթոր ուսուցչի հետ

Խնդիր 1 Դպրոցում աշխատող երիտասարդ ուսուցչուհիների սկսնակների ոչ պատրաստակամ լինելը:Համագործակցության բացակայություն:	Խնդիր 2 Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով ,մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում:

Իրականացման գործողություններ

Կազմակերպել սեմինարներ մանկավարժական, մեթոդական աջակցություն ցուցաբերելու համար:	Մշակել ուղեցույց, որը շատ կարճ ժամանակահատվածում հնարավորություն կտա սկսնակ ուսուցչին մտնել ուուսումնական գործընթացի մեջ՝ մինչև վերապատրաստման գնալը:

իրականացման ժամանակահատվածը

Մոտակա 2 տարվա ընթացքում

Աշակերտների աշնանային և գարնանային արձակուրդների ընթացքում

Պատասխանատու

Տնօրեն,

Մեթոդմիավորման նախագահներ

Ուսուցչի գնահատում

Չափորոշիչ	Առարկա	Միավոր 1-3
Հաղորդակցման վարպետություն		
Առարկայական իմացություն		
Հետաքրքիր է ներկայացնում նյութը		
Համբերատար բացատրում է անհասկանալի հարցերը		
Մատչելի ձևով է մատուցում դժվար նյութը		
Կարողանում է հետաքրքրություն առաջացնել իր առարկայի նկատմամբ		
Օգտագործում է աշակերտների անհատական հնարավորությունները, կազմակերպում է երկխոսություններ, բանավեճեր		
Առաջարկում է ստեղծագործական ինքնուրույն աշխատանքներ		
Ցուցաբերում է հարգալից, բարյացկամ վերաբերմունք աշակերտների Նկատմամբ		
Անաչառ գնահատում է յուրաքանչյուր աշակերտի		
Հավասար է վերաբերվում բոլոր աշակերտներին		
Միավորային գնահատում ընդամենը 20		

ՈԼՈՐՏ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ՝ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ

Նպատակ 2

Ստեղծել հնարավորություն յուրաքանչյուր աշակերտի համար՝ լիովին զարգացնելու իր ներուժը:

Խնդիր 1

Բարձր որակի կրթություն , առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում

Խնդիր 2

Սովորողների ուսումնառությունը խթանող, Ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում

Իրականացման գործողությունները

1.Բարձրացնել դասի կազմակերպման արդյունավետությունը

2. Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում :

1.Համակարգչով ապահովել բոլոր կաբինետները :

2.Նախագծային ,Գործնական աշխատանքների / ռեֆերատներ, սալիկահանդեսներ, լրացուցիչ տեղեկություններ / ընթացքում ապահովել ինքնուրույնություն:

Իրականացման ժամանակահատվածը

Ամենօրյա աշխատանք

1--.4 տարվա ընթացքում

2. Գործնական աշխատանքների ժամերը կազմակերպել այն կաբինետներում, որտեղ կան համակարգիչներ:

Պատասխանատու

Մեթոդմիավորման նախագահ Ուսուցիչ	1.Տնօրեն, ԴԽ, տնտեսվար 2.Տնօրեն, ուսուցիչ

Գնահատման ռուբրիկ1

Գնահատման չափորոշիչ	այո	ոչ	մասամբ
Սովորողները իրենց ուժերի նկատմամաբ ունեն օբյեկտիվ մոտեցում			
Սովորողները գերեգնահատում են իրենց կարողությունները			
Սովորողները թերագնահատում են իրենց կարողությունները			
Դպրոցում առկա ուսումնանյութական միջոցները բավարար են առաջընթացի համար			
Առկա ուսումնանյութական բազան չի ապահովում հնարավոր առաջընթացը			

Խմբային քննարկումների վերլուծության , ինքնագնահատման ռուբրիկ

Չափորոշիչ	Գրեթե միշտ/3մ	Հաճախակի 2մ	Երբեմն 1մ	Հազվադեպ 0մ
Խմբային աշխատանք/ սոցիալական հմտություններ / • Օգնել եմ պլանավորելու առաջադրանքի կատարումը:				

• Օգնել եմ պարզելու և լուծելու հիմնահարցը • Քաջալերել եմ մյուսներին • Ուշադիր լսել եմ • Փոխզիջումների եմ գնացել և ջանացել լինել հանդուրժող:				
Մասնակցություն թիմային աշխատանքներում: • Մասնակցել եմ քննարկումներին • Մյուսներին աշխատելու հնարավորություն եմ ընձեռել				
Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն • Աշխատել եմ խմբի հետ • Օգնել եմ ընկերներիս • Չեմ շեղվել առաջադրանքը կատարելիս				

ՈԼՈՐՏԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նպատակ 3

Նյութատեխնիկական և ուսումնանյութական բազայի արդիականացում , ուսումնական միջավայրի բարելավում

Խնդիր 1

Լաբորատորիաների, արհեստանոցի ,հրաձգարանի աշխատանքային գործիքները բացակայում են: ուսումնական նյութերի բարելավրում:

Խնդիր 2

Մարզադահլիճի մասնակի վերանորոգում , մարզագույքի ժամանակակից սարքավորումներով համալրում:

Իրականացման գործողությունները

Համագործակցել և գտնել բարերարներ արտադպրոցական միջոցառումներ կազմակերպելու համար:

Դիմել համապատասխան ձեռնարկություններ տնօրենների՝ անրաժեշտ գույք ձեռք բերելու նպատակով: բարերար ներ ,պետբյուջե , օրենքով չարգելված այլ աղբյուրներ

Իրականացման ժամանակահատվածը

Ուստարվա ընթացքում

2 տարվա ընթացքում

Մինչև 2027 ուստարվա ավարտը

Պատասխանատու

Տնօրեն, ԾԽ, ԱԽ

Կապան համայնքի ղեկավար

Տնօրեն , համակարգող,ԿԽ

գնահատում չափորոշիչ	Լավ	բավարար	Վատ
Նյութատեխնիկական բազան բարելավվել է	Նախատեսված գույքը, ըստ առաջնահերթության ձեռք է բերվել ամբողջությամբ	Նախատեսված գույքը ձեռք է բերվել մասամբ	Նախատեսված գույքը ձեռք չի բերվել
համագործակցություն	Ներգրավված են Բարերարներ	Բարերարները սահմանափակ կարողություն ունեն	Բարերարներ չեն գտնվել

ՈԼՈՐՏ՝ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ և ՆՈՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 4

ՏՀՏ-ների ներդրմամբ,էլեկտրոնային գրատախտակի կիրառմամբ ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովում

Խնդիր 1

Ունենալ համակարգիչներով և էլեկտրոնային գրադարանով հարուստ դասասենյակ:բյուջեի Տնտեսմամբ , բարեգործների , համայնքի ներդրման միջոցներով ստեղծել հարուստկաբինետ:

Խնդիր 3

Զարգացնել ուսուցիչների մոտ դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման նորարարությունները:

Խնդիր 2

Զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը:

Իրականացման գործողություններ

1.Պարբերաբար կազմակերպել դասալսումներ:
2.Վերահսկողության,քննարկումների, վերլուծությունների միջոցով ապահովել դասապրոցեսում համակարգիչների օգտագործումը:
3.Կազմակերպել ինֆորմատիկայի և համապատասխան առարկայի ուսուցիչների կողմից համատեղ վարվող դասեր:

4 մասնակից դարձնել վերապատրաստումներին

1.Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ համապատասխան մասնագետների աջակցությամբ:
2.Ինքնակրթության պլանի մշակում և իրականացում:
3.Ուսուցիչներին տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ՝ 1.տնօրեն , ԿԽ,համակարգող 2.մ/մ նախագահ,ինֆորմատիկայի ուսուցիչ,օպերատոր

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ

2024-25. 2025-26

Ռուբրիկ 1 Համակարգիչներն ըստ ուստարիների			
Քանակը			

	Ոչ մեկը	Մեծ մասը	Բոլորը
Վերապատրաստմանը մասնակցել են			

Ռուբրիկ 3				
	գերազանց	լավ	Բավ	Անբ.
Կիրառում են				

ՈԼՈՐՏ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Նպատակ 5

Ծնողական խորհուրդների գործունեության արդյունավետության բարձրացում, մասնակցությունը արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին:

Խնդիր 1	Խնդիր 2
Սովորողների հասարակական կյանքին ինտեգրելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում Ակտիվացնել ծնող - դպրոց համագործակցությունը	Բարելավել ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը համատեղ պլանավորման միջոցով;Համայնքային միջոցառումներին ակտիվ մասնակցություն:

Իրականացման գործողությունները

1.Ծնողներին պարբերաբար տեղեկացնել դպրոցի գործունեությանը, նպաստել երկկողմանի հաղորդակցությանը, խրախուսել նրանց մասնակցությունը դպրոցական կյանքին.
2. Մասնագիտական որակներ ունեցող ծնողների հայտնաբերում
3. Ծնողներին հայտնել մանկավարժներին հավասար գործընկերներ
4. Սեմինարների, խորհրդատվությունների կազմակերպում, քննարկումների միջոցով պարբերաբար կատարել վերլուծություններ
5. Աջակցությունների կազմակերպում կարիքավոր և առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների համար
6. Հարգալից ընդունել ծնողների հեռանկարային առաջարկները
7. Բաց դռների օրը. Ծնողները կարող են բացատրություն տալ աշակերտներին ու լսել նրանց մտքերն ու առաջարկները
Համատեղ բացահայտել հովանավորներ և նրանց հետ հաստատել կապեր

1.Մասնագետ ծնողների և ուսուցիչների համատեղ դասի պլանների մշակում և ներդրում
2Սովորողների, դասղեկների և ծնողների հետ համատեղ սումնադաստիարակչական պլանների մշակում, նպատակը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացում
3. Մշակված աշխատանքների իրականացում, խնդիրների բացահայտում և լուծում
4. Ըստ կրթական աստիճանների՝ (տարրական, հիմանական, միջնակարգ) դասի պլանների, միջոցառումների մշակում. Ներդրման փուլերում անհատական կարիքների բացահայտում
5. «Իմ դպրոցի գեղեցիկ բակ» անվանակարգի իրականացում՝ դասղեկ-ծնող-աշակերտ
6. Համատեղ դիտարկում, աշակերտների հետ միասին կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի կազմում
7. Ծնողներին պարբերաբար մասնակից դարձնել աշակերտների պարտադիր նվազագույն գիտելիքների գնահատմանը:



Գնահատում

Ռուբրիկ 1				
Չափորոշիչ	Բացառիկ	Օրինակելի	ընդունելի	Անընդունելի
Համագործակցության աստիճանները	Բոլոր ծնողական խորհուրդների , ծնողների ակտիվ մասնակցությունն	Ծնողների մեծ մասի ակտիվ մասնակցություն	Ծնողների կեսի ակտիվ մասնակցությունն	Մասնակցությունը բավականին պասիվ է

Ռուբրիկ 2			
Չափորոշիչ	Լավ	Բավարար	Անբավարար
Պատասխանատվությունն	Պատասխանատվությունը բաշխված է համաչափ	Պատ.-ը կրում է մեծ մասը	Պատ.-ն կրում է մեծ մասը
Համագործակցության որակ	Արդյունավետ է համատեղ պայմաններում, եթե կա կարծիքների բազմազանություն	Համագործակցում է հմտորեն, կա աշխույժ բանավեճեր աշխատանքների շուրջ	Նվազ համագործակցություն, կարճատև քննարկումներ

1. Ծնողներին աջակից դարձնել դպրոցական միջոցառումներին՝ ներդպրոցական օլիմպիադաներին, տոնական միջոցառումներին, մրցույթների կազմակերպմանը
2. Համատեղ բացահայտել աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ կոնֆլիկտները և աջակցել դրանց հաղթահարմանը
3. Բացահայտել շնորհալի երեխաներին և համտեղ մշակել խրախուսման մեխանիզմներ
4. Ծնողներին ընդգրկել ազգային տոներին, համայնքային ակցիաներին, շաբաթօրյակների կազմակերպմանը և անցկացմանը

Ռուբրիկ 3			
Չափորոշիչ / Գնահատում	Գերազանց	Լավ	բավարար
Ներգրավման մակարդակը	Ներգրավված են գրեթե բոլորը	Ներգրավված է մեծ մասը	Ներգրավված են մասամբ

Ոչ մի գաղափար , եթե այն անգամ հանճարեղ լինի , չի կարող հաջողությամբ իրականացվել , առանց հստակ գործողությունների նկատմամբ ճիշտ հսկողության : Վերահսկողությունը գործընթաց է, որ ներառում է մանկավարժների, խորհուրդների հետ խորհրդակցային կամ համագործակցային եղանակով տարվող աշխատանքները և ուղղված է դասավանդման որակի և ուսուցիչների մասնագիտական աճի բարձրացմանը, կրթական միջավայրի բարելավմանը , նյութատեխնիկական բազայի հարստացմանը՝ ըստ առաջնահերթության: Ներդպրոցական վերահսկողությունը դիտարկման , հաշվման, ստուգման և դրանց արդյունքների վերլուծության ամբողջություն է , կենսական պահանջ և ղեկավարի և ուսուցիչների համար: ԴԽ –ին ներկայացվող հաշվետվությունը բխում է տարեկան աշխատանքային պլանի կատարողականից :Ուստի ուսուցման որակի վերահսկողությունը տնօրենի կողմից կարելի է չափել ռուբրիկով, որը կարող է նաև հանդիսանալ որպես հաշվետվություն և տնօրենի աշխատանքի ուղեցույց:

Ուսուցման բովանդակության վերահսկման ռուբրիկ

	Աշխատանքի բովանդակությունը	**1-ին կիս.**	**2-րդ կիս.**	**Ընդամենը**
1	Տնօրենին կից խորհրդակցությունների թիվ			
2	Դասղեկների խորհրդակցությունների թիվ			
3	Դասալսումների թիվ			
4	Խմբակների դիտարկումների թիվ			
5	Դասղեկի ժամերի դիտարկումների թիվ			
6	Մանկավարժական խորհրդի նիստերի թիվ			
7	Մեթոդմիավորման նիստերին մասնակցության թիվ			
8	ԴԽ նիստերին մասնակցության թիվը			
9	ԱԽ նիստերին մասնակցության թիվը			
10	ԾԽ նիստերի մասնակցության թիվը			
11	Բաց դասերի թիվը			
12	Առարկայական մրցույթների թիվը			
13	Առարկայի մակարդակի ուսումնասիրությունների թիվը			
14	Մասնագիտական կողմնորոշման դասընթացներին մասնակցության թիվը			
15	Գիտաժողովների կամ բաց դասախոսությունների թիվը			
16	Ուստարում ստացած պատվոգրերի , շնորհակալագրերի թիվը			
17	Ուստարում դպրոցի կողմից խրախուսված `ուսուցիչ- , աշակերտների թիվը			
18	Ամիսը մեկ անգամ վերստուգվել է էլմատյանները			
19	Ամիսը մեկ անգամ վերստուգվել է դասղեկների ծրագրերը			
20	Յուրաքանչյուր կիսամյակի վերջում վերստուգվել է թեմատիկ և գործնական աշխատանքների առկայությունը , ծրագրերի կատարողականները էլմատյանով			
21	Երկու ամիսը մեկ անգամ ստուդվել է ԴԽ , ՄԽ, ԾԽ ,ԱԽ մատյանները			
22	Տրվել են տնօրենության գրավորներ 1-ին և 2- րդ կիսամյակում			
23	Ըստ կարգի անց են կացվել առարկայական օլիմպիադաները			

ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ընթացակարգի համաձայն այս փաստաթուղթը բաժանվում է 5 ուսումնական տարիների, որի հիման վրա կազմվում է տվյալ ուսումնական տարվա դպրոցի զարգացման ծրագիրը: Հայեցակարգը կազմվել է՝ նկատի ունենալով կրթական համակարգի բարեփոխումների պահանջները, դպրոցի առանձնահատկությունները, համայնքի ներգրավվածության աստիճանը՝ որպես շահառու կողմ, և համագործակցային օղակների շահագրգռվածությունը:

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դպրոցի կառավարման խորհուրդը (ԿԽ) հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն:

ԴԶԾ – ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5 – ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-Ի նպատակադրումներն ամբողջությամբ ընդգրկել դպրոցի տարեկան աշխատանքային պլանում՝ԴԶԾ- ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

ԴԶԾ –ի վերահսկողության արդյունավետ միջոցներ են .

1. Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ /հունիս, դեկտեմբեր/ամիսներին դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված ԴԶԾ դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:

2 . Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը:

3.Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ԴԶԾ–Ի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակներում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:

4. Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից ԴԶԾ-ի արդյունքների գնահատմանը:

<<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրց>> ՊՈԱԿ-ի 2023- 28թթ զարգացման ծրագիրը դպրոցի տնօրենի աշխատանքը կարգավորող նորմատիվ փաստաթուղթ է , որը կառավարման խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո կդառնա ուսումնական հաստատության ռազմավարական փաստաթուղթ:

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն

Միջոցառում , գործողություն	Ակնկալող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Նշումներ
1.ՈՒսումնական միջավայրի բարելավում, ուսումնադաստիարակչական, մեթոդական , ուսումնանյութական բազայի ապահովում , ՏՀՏ գործիքների առկայություն:	Դպրոցի շենքային պայմանները և ուսումնանյութական բազան համապատասխանում է ուսումնական տարվա մեկնարկին: ՈՒսուցման արդյունավետության բարձրացում:	24 – 30 .08 Ամբողջ Տարվա ընթացքում	Համակարգողի հետ համագործակցության արդյունքում ճիշտն կարգին համապատասխան ապահովել 1.դասասենյակներում գույքը 2.սանհանգույցների, խոհանոցի,դասարան ների,շրջակայքի սանիտարահիգենիկ պայմանները 3. վերանայել անվտանգության կանոնները	ԴՁԾ-ով նշված գույքը ձեռք կբերվի ըստ առաջնահեր թության
2.ՈՒսումնադաստ իարակչական աշխատանքների կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում. • մ/խ նիստ • դասարանա խմբերի կազմավորո ւմ • դասացուցա կի կազմում • թեմատիկ պլանների հաստատում • դասղեկների նշանակում • խմբակների ղեկավարնե րի նշանակում	Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպում: Դասարանների ծանրաբեռնվածությունը , սովորողների ընդգրկվածությունը սանիտարական և անվտանգության նորմերին համապատասխան է:	30.08. 23թ 09. 01. 24թ	Բաշխումը կատարվել է <<Հանրակրթության մասին >>ՀՀօրենքի , հանրակրթական ուսումնական հաստատոջության օրինակելի կանոնադրության, մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրի և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին ու հաստատության զարգացման ծրագրի պահանջին համապատասխան	

3. Խորհրդակցակա ն մարմինների ձևավորում՝ դասարանական և համադպրոցական ժողովների կազմակերպում	ԾԽ ,ԱԽ կազմավորում Աշխատանքային պլանների քննարկում և հաստատում: ՈՒսումնադաստիարկ-չական՝արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին ծնողների, համայնքի ներկայացուցիչների	07. 09 – 15. 09 Ամբողջ տարվա ընթացքում	Դասարանական ծնողական խորհրդի կազմից ձևավորել Ծխ,ով և կառավարման խորհրդի անդամ է , և մանկավարժա կան, կազմել տարեկան աշխատանքային պլան բացատրել համագործակցությա ն կարևորությունը և արդյունավետու թյունը: ԱԽ-Ն ընտրվում է ներկայացրած ծրագրի դրույթներով , մ/խ անդամ է , բացատրել աշխատանքի բովանդակությունը և ուսումնադաս տիարակչական աշխատանքներին ինտեգրվելու կարևորությունը:	
4. Կազմել տարիֆիկացիոն հաստիքային ցուցակների և ամենամյա ծախսերի նախահաշիվ՝ համակարգողի հետ և ներկայացնել հաստատման;	Ժամանակին և ճիշտ պլանավորել տարեկան ծախսերը՝տարբեր ուղղություններով:	01. 09-15. 09 15. 01-20. 01	Ներկայացնել հաստատության խորհրդի հավանությանն , որից հետո լիազոր մարմնի հաստատմանը : Քննարկվում է՝ 1. ուստարվա ֆինանսական հաշվետվ, 2.ամենամյա ծախսերի նախահաշիվը 3.ԴԶԾ-ի ընթացիկ գործունեությունը	Գնումների պլանում նախատեսե լ ուսուցման առաջադիմություն ապահովող նյութերի , միջոցների գնում
5. Բյուջեի նախագծին բյուջետային օրացույցի կազմում: Բյուջեի նախագծի քննարկումների կազմակերպում և լրամշակում:	Ֆինանսական հաշվետվությունների թափանցիկություն	01. 15-01. 20 մինչև 15. 12	ՀՀպետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությամբ ամրագրված ժամանակացույցին	Հաստատվում,է փետրվարին,հանր այնացվում մինչև մարտի 15-ը

			համապատասխան: Բյուջեի նախագծի քննարկումը կազմակերպվում է դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով ԱԽ ,ԾԽ , ՄԽ . ԿԽ – հետ, որից հետո վերջնական տարբերակը մշակվում է	
6. Հանդիպում ներառական, բազմամասնագի տական թիմի հետ:Աշխատանքի պլանավորում , անելիքների բաշխում:Կարիքների բացահայտում;	Ներառական կրթության համագործակցային արդյունավետ աշխատանք: Չեզոքացնել բոլոր կարծրատիպերը աշխատանքի դժվարության ուղղությամբ	01. - 05. -09 Ամբողջ տարվա ընթացքում	ՈՒԱԳՏ- Ի , ուսուցչի օգնականների,/հատուկ մանկավարժի, հոգեբանի առկայության դեպքում/, ուսուցիչների հետ կազմակերպվում է հանդիպում,որտեղ քննարկվում են ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքները, ժամանակացույցը, համագործակցությունը ՏՄԱԿ-ի և ծնողների հետ	Ներկայացվում է հաշվետվություն ԿԽ նիստում
7. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկում՝ Էլ.մատյանների կարգավորում՝ Թեմատիկ պլանների ներբեռնում Արտադասարանական խմբակների ծրագրերի ներբեռնում, դիտարկում մ/մ աշխատանքների դիտարկում Դասղեկների աշխատանքների դիտարկում Հեռավար դասերի մշտադիտարկում/ անհրաժեշտության	Ուսուցումը կազմակերպվում է Ուսումնադաստիարակչական տարեկան պլանի դրույթներով:Մ/մաշխատանքները և վերահսկողությունը արդյունավետ է , բովանդակությունը՝ ուսուցողական զարգացնող,ինքնակրթվելուն ուղղորդող, բացահայտող: Դասալսումները, վերապատրաստումները , մենթոր ուսուցչի հետ համագործակցութ	ուստարվա ընթացքում	Չափորոշչային պահանջների համապատասխան իրականացվում է կրթության և դաստիարակության գործընթացը:Տարեսկզբին մնացորդային գիտելիքների՝ բազզան որոշելու համար տրվել է թեստային գրավոր աշխատանքներ մայրենիից և մաթեմատիկայից 5 – րդ դասարաններում՝տարեվերջին աճի կամ նվազման դինամիկան	

դեպքում/ ՈՒսուցման որակի վերահսկում	յունը նպաստել են ուսուցիչների նորովի և արդյունավետ դասերի վարմանը: ԿԽ–ի կողմից հաստատված ներքին կարգապահական կանոնների պահպանում		պարզելու նպատակով:Բոլոր դասարաններում ԲՏՃՄ առարկաներից տրվել է գրավոր աշխատանք, կատարվել է դրվածքի ուսումնասիրություն, կլոր սեղաններ, վիկտորինաներ որտեղ հաղթող թիմերը և անհատները արժանացել են խրախուսանքի:Կազմակերպվել են օլիմպիադաներ `ըստ կարգի :	
8. ՈՒսուցման որակի բոլոր վերահսկողների կատարած աշխատանքի հաշվետվություններ	դպրոցում իրականացված աշխատանքների ծավալը , բազմաբովանդակային է ,ուսուցման համագործակցության աստիճանը ակնկալում է արժևորում:	1-2-րդ կիսամյակների ավարտին	Ըստ հաշվետվությունների `կազմակերպվել են որակ ապահովող միջոցառումներ, տարբերակվել են առաջին և երկրորդ կիսամյակների որակական և առաջադիմության աճի դինամիկան:ԿԱՊԿ ՈՒ սովորողները հասել են իրենց կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների իրագործմանը, միջոցառումները սովորողներին դաստիարակել են հայրենասիրություն, բարոյականություն, նրանց մեջ ձևավորել են գեղագիտական ճաշակ , ծանոթացել և իրազեկվել են մարդկային վատ	

			արարքների բացասական երևույթներին՝մեդիա դաշտի վտանգներին, բուլինգի երևույթին, թրաֆիքինգին,որին մասնակցել են նաև ծնողներ:	
9. Աշխատանքների ամփոփում արժևորում գնահատանք, խրախուսում	Դպրոցում տիրում է բարոյահոգեբանա կան համերաշխ մթնոլորտ: ՈՒսուցիչները իրենց աշխատանքը գնահատում են բավարար:	տարեվերջ	Բոլոր այն ուսուցիչները, ովքեր ըստ ԴԶԾ նշված չափորոշիչների կատարել են իրենց աշխատանքները արժանանում են խրախուսանքի՝ <<դպրոցի լավագույն դասղեկ >>, <<Որակի սերմնացան>>, <<Սիրված ուսուցիչ>>, Դրամական պարգևի կարժանանան օլիմպիական մրցանակային տեղեր ապահոված ուսուցիչները, նախագծային և հետազոտական աշխատանքներում արդյունքի բարձր գնահատանքի արժանացած ուսուցիչները:	

Դպրոցի առաքելությունը և Ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո: Զարգացման ծրագրի 5- ամյա աշխատանքից հետո,ակնկալում եմ ներքոնշյալ արդյունքները.

Ակնկալվող արդյունքներ

- Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր
- Փորձառու և ճանաչված մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ
- Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ դպրոց
- Աշակերտի թվի ավելացում
- Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց
- Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն
- Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում
- Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն
- 21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքա

Գնահատման չափանիշը	Գնահատականը		
	բավարար	լավ	գերազանց
Նախատեսված աշխատանքները կատարվել են մասամբ	V		
Նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են		V	
Նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով			V